№ 155 ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 18

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 18 № 155

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ
Ամսական Մէկ ռուբլի
Ամերիկա տարեկան . 6 դոլլար
Եւրոպա » . . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 ռուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել . . . . 40 կոպ.

ՍՏԻՊՎԱԾ ԶԻՋՈՒՄՆԵՐ

II

Զիջումները արված են. Թիւրք կառավարութիւնը հրատարակել է սահմանադրութիւն։

Անկասկած՝ դրանք ստիպված զիջումներ են եղել, որոնք քաղաքական անհրաժեշտութեան դրոշմն են կրում իրանց վրա։ Եւ յիրաւի՝ սահմանադրութեամբ Բարձրագոյն Դուռը ցանկացել է թէ առաջն առնել ներքին այն յուզմունքների, որոնք սկսում էին երեւան գալ ազատագրական հովերի ազդեցութեան տակ, թէ ոչնչացնել արտասահմանում ապաստան գտած յեղափոխականների գործունէութիւնը և թէ անդրադարձնել Անգլիայի, Ռուսաստանի և միւս պետութիւնների պահանջները մասնակի ռեֆորմներ մտցնելու Թիւրքիայի այս ու այն մասում, օրինակ, եթէ այսօր Մակեդոնիայում, վաղը գուցէ Հայաստանում և ուրիշ մասերում։

Թիւրքական սահմանադրութիւնը ասպարէզ է հանվել մի քանի վտանգներ և սպառնալիքներ յետ մղելու նպատակով։

Եւ անշուշտ, եթէ առաջիկայ եղելութիւնները Թիւրքիայի մայրաքաղաքում և նշանաւոր կենտրոններում նոր բարդութիւններ առաջ չը բերեն, սահմանադրութիւնը կարող կը լինի պատուաստվել և կամաց-կամաց արմատներ բռնել միջնադարեան բռնակալութեան այդ երկրում։

Կը սխալվեն այն գործողները, որոնք այժմեանից իսկ արմատական առաջարկներ կանեն տապալել Եըլդըզը վերջնականապէս և հրատարակել հանրապետական սահմանադրութիւն։ Կը սխալվեն և նրանք, որոնք կաշխատեն քաղաքական և քաղաքացիական նպատակների վրա աւելացնել նաև տնտեսական մաքառումներ և յայտարարել դասակարգային կռիւ։

Կը սխալվեն, որովհետև նրանք նորից հին ռէժիմի գիրկը կը ձգեն շատ մարդկանց, որոնք ներկայումս պատրաստ են մասնակցելու ազատագրական շարժման և ամրացնելու սահմանադրութեան հաստատվելը երկրի մէջ։

Քաղաքական գործողները այժմ պէտք է ժողովեն ոյժեր և ոչ թէ ջլատեն նրանց։ Նրանք պէտք է լաւ հասկանան, որ եթէ Եըլդըզը և Բարձր. Դուռը արել են զիջումներ որոշ մերձաւոր նպատակների և իրանց ինքնապաշտպանութեան համար, նրանք բոլորովին ուրիշ դիրք կը բռնեն, երբ տեսնեն իրանց վտանգի մէջ։ Այն ժամանակ անխուսափելի կը դառնան ճակատագրական ընդհարումները, որոնցից աշխատել են զգուշանալ պետական մարդիկ և որոնց հետևանքների բնաւորութիւնը դժուար է նախատեսել։

Ռուսաստանի և Պարսկաստանի յեղափոխութիւնների նորագոյն պատմութիւնը ցոյց տուեց, որ քաղաքական գործողների սխալները շատ արագ ազդում են հասարակական տրամադրութիւնների վրա և յետ են կասեցնում մարդկանց ազատագրական շարժումներից։ Մարդիկ, չը դիմանալով անցողական շրջանի շատ սուր և խոշոր զրկանքներին, սկսում են յետյետ քաշվել և ընկնել հին ռէժիմի գործողների գիրկը։

Սահմանադրութեան կուսակիցները և նրա համար գործողները պէտք է ներկայումս իրանց բոլոր աշխատանքը գործ դնեն ոչ այնքան նոր կռիւներ և մաքառումներ կազմակերպելու վրա, որքան սահմանադրականների միացման և համերաշխ գործունէութեան վրա։

Իսկ երբ սահմանադրութիւնը կը մարմնանայ կեանքի մէջ և կը դառնայ իրականութեան ամուր սեփականութիւն, այն ժամանակ կը սկսվեն զանազան հոսանքների մաքառումները և կուսակցական գործողների պայքարները։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Վիեննա, 15 յուլիսի

«Corresp. Bureau»-ին հեռագրում են Կ.-Պոլսից, որ Թիւրքական լրագիրները այսօր հաղորդում են, որ սուլթանը յուլիսի 13-ին, մօտաւորապէս գիշերվայ կէսին, երեւաց Եըլդըզ-Քէօշկի առջև խմբված ամբոխին, բաց արեց պատուհանը և հարցրեց, թէ ինչո՞ւ է հաւաքվել ամբոխը։

Ամբոխը պատասխանեց.

«Մենք ուրիշ ոչինչ չենք ցանկանում, բացի նրանից, որ ուզում ենք իմանալ ձերդ մեծութեան առողջութեան մասին։ Ուղիղ 32 տարի է, որ մի քանի դաւաճաններ շարունակ չէին ուզում ցոյց տալ մեզ ձերդ մեծութեան դէմքը։ Այժմ մենք տեսանք ձերդ մեծութեանը։ Բիւր շնորհակալութիւններ։ Կեցցէ շատ տարիներ փադիշահը»։

Սուլթանը պատասխանեց.

«Զաւակներս, եղէք հանգիստ։ Գահ բարձրանալու օրից սկսած ես աշխատել եմ հայրենիքի բարօրութեան համար։ Իմ ամենաանկեղծ փափագն էր իմ հպատակների բարեկեցութիւնը, որոնք նոյնքան են մօտ իմ սրտին, որքան և իմ սեփական զաւակները։ Աստուած վկայ է ինձ, որ այսուհետև ձեր ապագան ապահովված է։ Ես կաշխատեմ ձեզ հետ միասին։ Ապրեցէք այժմ իբրև եղբայրներ, օգտվելով ձեր ազատութիւնից։ Ես գոհացած եմ ինձ զգում այն հաւատարմութեամբ ու շնորհակալութեամբ, որը ցոյց տուիք դուք ինձ։ Գնացէք ձեր տները, հանգստացէք»։

Բուռն ու ոգևորված օվացիաներ անելով ի պատիւ սուլթանի՝ ամբոխը ցրվեց։ («Հ. Գ.»)

—

Պարիզից հեռագրում են 11 յուլիսի.—Երիտասարդ Թիւրքերի օրգան «Մեշվերէթը» հրատարակել է բողոք մեծ պետութիւնների որևէ միջամտութեան դէմ։ Բողոքի մէջ ասված է, որ բոլոր ազգերը անկապտելի իրաւունք ունեն ազատ ինքնորոշման, իսկ օտարազգի միջամտութեան դէպքում—իրաւունք պաշտպանվելու։

Երիտասարդ Թիւրքերը պահանջում են մեծ պետութիւններից յարգանք դէպի իրանց ազգային արժանապատուութիւնը։ Նրանք չեն կամենում հաւատալ, որ օտարազգի օֆիցերները ցանկանային, ինչպէս եղաւ Պարսկաստանում, խեղդել հայրենասէրների արեան մէջ ազատութիւնը և արդարութիւնը։ («Рѣчь»)

—

Կ. Պոլիս, 15 յուլիսի

Թիւրքական լրագիրներում հրատարակված պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, երրորդ զօրաբանակի հրամանատարը ամնիստիա է խնդրել երեք վիլայէթների ազգութիւնների հրոսակախմբերի անդամների համար այն պայմանով, որպէսզի նրանք իրանց մօտ գտնված զէնքերը յանձնեն իշխանութեան և վերադառնան իրանց հայրենիքը, որովհետև պարլամենտի գումարումը սպասվում է ժողովրդի հաւատարմութիւնն ու յարգանքը դէպի սուլթանը։ Սուլթանը համաձայնվել է ամնիստիա շնորհել, եթէ վերոյիշեալ պայմանները կը պահպանվեն։

Թիւրքական լրագիրները հաղորդում են, որ զինուորական դպրոցների տեսուչ Իզմայիլ փաշան և նրա աներոջ որդի գնդապետ Եսսաջին, որ զինուորական-բժշկական դպրոցի վերատեսուչն է, սուլթանական իրադէով հեռացված են պաշտօնից։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 15 յուլիսի

«Coresp. Bureau»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ Բ. Դրան բոլոր մարմինները, նոյնպէս և կառավարչական միւս մարմիններ համարում են եւրոպական պետութիւնների գործունէութիւնը՝ Մակեդոնիայում բարենորոգումներ մտցնելու նպատակով այսուհետև աւարտված։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 16 յուլիսի

Սալոնիկից եկաւ 500 մարդուց բաղկացած մի պատգամաւորութիւն՝ շնորհակալութիւն յայտնելու սուլթանին սահմանադրութեան համար։ Լրագիրները հաղորդում են, որ երէկ ներումն շնորհված քաղաքական յանցաւորներին կենտրոնական բանտից արձակելու ժամանակ, քրէական յանցաւորները նոյնպէս ազատութիւն պահանջեցին, արգելելով քաղաքական յանցաւորների հեռանալը։ Մեծ վէզիրի միջամտութեամբ դէպքը առանց արիւնհեղութեան վերջացաւ։ Հոգևորականութիւնը և ոստիկանութիւնը ամրապնդում են շնորհակալութեան զգացմունքը դէպի սուլթան-խալիֆը։ Զիջումների իսկապէս իրագործման մասին յոռետեսութիւնը և երկրի մէջ սովորական անվստահութիւնը ըստ երևոյթին անհետանում են։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 16 յուլիսի

Պաշտօնապէս յայտարարված է, որ քաղաքային և համայնական իշխանութիւնները զբաղված են ընտրողական ցուցակներ կազմելով։ Թիւրքական լրագիրները հաղորդում են, որ երէկ տեղի ունեցաւ 166 քաղաքական բանտարկեալների, որոնց թւում և մի քանի հայերի, ազատումը։ Պաշտօնանկ են եղած ոստիկանական մի քանի բարձր պաշտօնեաներ։ («Հ. Գ»)

—

Երիտասարդ-թիւրքերի շարժման առիթով.— «Frankfurter Zeitung» լրագրի Սալօնիկի թղթակիցը Մակեդոնիայի իրերի դրութիւնը շատ լուրջ է համարում, չը նայելով որ Մօնաստիրի վիլայէթում արդէն խաղաղութիւն է տիրում։

Վաղուց պատրաստվող շարժումը, թղթակցի ասելով, նրա համար չէ բռնկվել, որպէսզի շուտով չանհետանայ։

Ամենափոքր անտակտութիւնը ներկայ վայրկեանում կարող է հրդեհել ամբողջ Բալկանեան թերակղզին։

Առ այժմ սպասողական դիրք բռնելով, երիտասարդ-Թիւրքերը այնուամենայնիւ ժամավաճառ չեն լինում. Նրանք եռանդով նախապատրաստում են ժողովուրդը վարչական նոր ձևի համար, խոստանալով իրանց կողմից ընդարձակ աջակցութիւն ցոյց տալ։

Երիտասարդ Թիւրքերի կոմիտէի հրատարակած երկրորդ թռուցիկում մատնանշվում է, որ հին Թիւրքերը հաւանականօրէն անկարգութիւններ կանեն, որ կարող է բաւականաչափ վնասել երիտասարդ-Թիւրքերի սկսած գործին։

Իրանց կողմից երիտասարդ-Թիւրքերը հանգստացնում են հասարակական կարծիքը, հաւատացնելով որ իրանց գործողութիւնները վիլայէթների գիւղական ազգաբնակութեան վերաբերմամբ խաղաղասիրական են և նրա դէմ առանց կրօնի և ազգութեան խտրութեան ոչ մի թշնամական միջոց ձեռք չի առնվի։ Երիտասարդ-Թիւրքերի անկեղծ ցանկութիւնը կայանում է նրանում, որպէս զի էվօլիւցիան, որ պիտի ծառայէ բացառապէս ժողովրդի շահերին, կատարվի առանց արիւնհեղութեան։ Իրանց դեվիզը ընդունելով «kulli muserum gouksil» (անկցի ամենը, որ փտած է, հնացած), մակեդոնական պրոգրեսսիվ կոմիտէի անդամները ձգտում են միայն առողջացնել այն հիմունքները, որոնց վրա ուզում են կառուցանել ժողովրդական բարեկեցութիւնը։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ռեվէլ, 16 յուլիսի

Ռուսաստանի Նորին Կայսերական Մեծութիւնները Օգոստափառ երեխաների հետ «Շտանդարտ» կայսերական զբօսանաւով ճանապարհ ընկան ռեվէլեան նաւահանգստից։ («Հ. Գ.»)

—

Պարիզ, 16 յուլիսի

«Temps» և «Journal des Debats» լրագիրները բացատրում են Թագաւոր Կայսրի և Ֆալիէրի տոստերը, մատնացոյց անելով, որ նրանք կրկնակի հաստատում են ռուս-ֆրանսիական դաշնակցութեան խաղաղասէր բնաւորութիւնը։ Երկու լրագիրները ևս առանձնապէս շեշտում են նախագահի գործածած «խաղաղութեան երաշխաւորութիւն» նախադասութիւնը, որը ցոյց է տալիս, թէ ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը, չը սպառնալով ոչ ոքի, ծառայում է հակակշիռ երեքպետեան դաշնակցութեան։ Չը նայելով որ ամառը սովորաբար կրճատվում են գործերը և բօրսայի տրամադրութիւնը թոյլ է, ռեվէլեան տեսակցութիւնը նպաստաւոր ազդեցութիւն ունեցաւ ռուսական և ֆրանսիական ֆոնդերի կուրսերի վրա։ («Հ. Գ.»)

—

Բեռլին, 16 յուլիսի

Բաժակաճառերի կայացած փոխանակութեան առիթով Ռեվէլում մամուլը շատ զսպված լեզուով է խօսում։ («Հ. Գ.»)

—

Ռեվէլ, 15 մայիսի

Երեկոյեան ժամը 8-ին «Վերիտէ» զրահանաւի վրա նախագահը ճաշկերոյթ տուեց, որին բարեհաճեցին ներկայ լինել Նորին Մեծութիւնները ամբողջ սվիտայի և նաւահանգստում կանգնած ծովապետների ու հրամանատարների ուղեկցութեամբ։ Երեկոյեան ժամը 10-ին նորից վերսկսվեց էլեկտրական հրավառութիւնը ֆրանսիական և ռուսական նաւերի վրա։ Ժամը 10-ին Նորին Մեծութիւնները վերադարձան իրանց զբօսանաւը։ Մօտաւորապէս կէս գիշերին ֆրանսիական նաւատորմը, ականանաւերի ուղեկցութեամբ մինչև Դագերօրդը, հեռացաւ ռեվէլեան նաւահանգստից։

Գիշերվայ ժամը 12-ին ֆրանսիական նաւատորմը նախագահ Ֆալիէրի հետ միասին խարիսխը վերցրեց և ռուսական նաւատորմից հնչող ֆրանսիական ազգային օրհներգի նուագածութիւնների ուղեկցութեամբ դուրս եկաւ ծով։ «Ադմիրալ Մակարով» կրէյսերը գնաց դէպի Կրօնշտադ։

Ֆրանսիական հանրապետութեան նախագահի տուած այցելութիւնը Ռեվէլում Թագաւոր Կայսրին՝ քաղաքավարութեան և մտերմութեան բնաւորութիւն էր կրում, առիթ տալով դրանով երկու տէրութիւնների պետերին պաշտօնապէս անձնական յարաբերութիւնների մէջ մտնելու, և միևնոյն ժամանակ առիթ ներկայացրեց մի աւելորդ անգամ վկայելու այն մտերմական կապերը, որոնք շաղկապում են իրար հետ երկու դաշնակից երկիրները։ Կայսրի և նախագահի, նոյնպէս և արտաքին գործերի երկու մինիստրների միջև տեղի ունեցած խօսակցութիւնների ժամանակ պարզվել է հայեացքների լիակատար նմանութիւնը միջազգային քաղաքականութեան բոլոր ընթացիկ հարցերի վերաբերմամբ, երբև հաստատութիւն խաղաղութիւնը պահպանելու և ամրապնդելու, ինչպէս որ նա արտայայտվեց «Շտանդարտի» վրա արտասանված կենացների ժամանակ։ Այդ հանդիպման բնորոշ գծերից մէկն էլ կը հանդիսանայ այն մտքերի փոխանակութիւնը, որին նա առիթ տուեց։ Նախագահը մատուցեց Թագաւոր Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնային գեղարուեստական ճաշակով պատրաստված երկու արծաթէ վազաներ Ֆրակսի վարդերով և երկու արկղ խաղալիքներ Օգոստափառ երեխաների համար։

(«Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Թէհրան, 16 յուլիսի

Նոր ժամանած Թիւրքական դեսպան Մասում-բէյ յանձնեց շահին իր հաւատարմագրերը։ Թէհրանում գտնվող երկու թղթակիցները, որոնք ներկայացնում են «Русское Слово», «Рѣчь» և «Русскія Вѣдомости» լրագիրները, երէկ մասնաւոր ունկնդրութեան ընդունվեցին շահից։ Շահը պնդեց թղթակիցների առաջ, որ անփոփոխելի է իր դիտաւորութիւնը պահպանել սահմանադրական կազմը Պարսկաստանում, հրաւիրել նոր մէջլիս, և թոյլատրեց լուսանկարել իրան և թագաժառանգին։ Թէհրանից փախած և Համադանում բռնված յեղափոխութեան յայտնի քարոզիչ Սէիդ-Ջամալ մեռաւ բանտում։ («Հ. Գ.»)

—

(Սեփակ. Թղթակ.)

Թաւրիզ, 12 յուլիսի

Յուլիսի 10-ին կէսօրից յետոյ հրացանաձգութիւնը վերսկսվեց, իսկ երէկ և այսօր թնդանօթաձգութեամբ կռիւը շարունակվում է։ Գործում են և ռմբաձիգ թնդանօթներ։ Քաղաքը աւերված է, անիշխանութիւնը կատարեալ. կողոպուտ, թալան անթիւ։ Սպանութիւնները շատ շատ են. հաշտութեան, խաղաղութեան դեռ ոչ մի յոյս չը կայ։ «Times» լրագրի թղթակիցը մինչև երէկ 1200 թուման հեռագրի փող է տուել։

Բարրիկադներ են շինված փոխ-կառավարչապետի տանը և փողոցում։ Քաղաքի տէրը անիշխանականութիւնն է։ Մայրերը արիւն են լալիս։ Մուրացկանների, անօգնականների լացն ու աղերսը, ողբն ու կականը երկինք են հասնում։ Ռահիմ-խանի ձիաւորները աւերում են քաղաքը և շրջակայքը։

Իբս.

—

Սալմաստ, 16 յուլիսի

Յուլիսի 9-ին Սալմաստի, Խօյի և Մակուի վրա վարչութիւնը յանձնված է Մակուի խան Իկբալիս-Սալթանէին։ Նրա հրամանով ձերբակալված են ժողովրդական շարժման պարագլուխները։ Նրանք խիստ պատիժների են ենթարկված։ Վաճառական դասակարգը և կալուածատէրերը շատ գոհ են շահի յաղթութեամբ. ազգաբնակութեան մնացած դասակարգերը խուլ դժգոհութիւն են տածում, բայց ցոյց սարքել չեն վստահանում։ («Հ. Գ.»)

—

Խօյ, 16 յուլիսի (Ջուլֆայի վրայով)

Կառավարութեան կողմնակիցների և յեղափոխականների միջև ընդհարումից յետոյ շարժումը դադարեցված է։ Ընդհարման ժամանակ սպանվեցին 8 յեղափոխականներ, բռնվեց տեղական գաղտնի կոմիտէտը իր արխիվով։ Ճնշումները շարունակվում են, անհանգիստ տարրերը հեռացան։ Քաղաքը հանգիստ է։ Տեղական ազգաբնակութիւնը անտարբեր է վերաբերվում դէպքերին։ Թիւրք-պարսկական սահմանի վրա՝ Մակուի խանութեան շրջանում եկան Թիւրքական զօրքերը։ Ստացված տեղեկութիւնների համեմատ նրանք դիտաւորութիւն ունեն գրաւել պարսկական մաքսային կայարանը Կազլիգիօր գիւղում։ («Հ. Գ.»)

—

Խօյ, 16 յուլիսի (Ջուլֆայի վրայով)

Հէյդարալլի քիւրդ ցեղի պարագլուխները հրաւիրված են զօրքերի հրամանատարի մօտ, հրահանգներ ստանալու համար։ («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 16 յուլիսի

Թիւրքական զօրքերը, որոնք այս օրերս գրաւել էին Գուլինջի գիւղը Ենգէլի շրջանում, անցան այդտեղից Ալբէկլէ գիւղը Սոմայի հարևան շրջանում, մի փարսախ հեռաւորութեամբ դէպի հարաւ-արևմուտք,

(«Հ. Գ.»)

(Սեփական թղթակցից)

Թաւրիզ, 5 յուլիսի, երեկոյեան

Առաւօտեան լուրերը պօստին հասցրի։ Երեկոյեան լուրերի ուշանալու պատճառը պօստն է։ Այստեղից Ռուսաստան պօստը մեկնում է շաբաթը երեք անգամ, այդպիսով նոյն օրվայ երեկոյեան լուրերը երկու օրով ուշ է հասնում խմբագրութեանը։

Առաւօտեան գրել էի, որ սահմանադրականները գնացին իւզբաշի Գուլամ-Ալուտունը կողոպտելու։ Յարձակվողների դէմ քիչ դիմադրութիւն ցոյց տալուց յետոյ՝ վերջինս անձնատուր է լինում խոստանալով գնալ և Սաթթար-խանին բացատրութիւն տալ իր վերջին օրերի վարմունքի մասին, բայց մինչև Սաթթար-խանին ներկայանալը ճանապարհին սահմանադրականները գնդակահարում են։ Այդ օրը սահմանադրականները իր տան մէջ սպանեցին և յայտնի Նաքաթ-օղլի Հուսէյնին։ Այս երկու սպանվողներն էլ ժամանակի յայտնի լօթիներն (դօչի) են եղել և միաժամանակ կառավարական պաշտօնեաներ։ Ներկայ անիշխանութեան օրերին շատ անգամ հին անձնական հաշիւներ են հարթվում, որոնք առիթ են դառնում աւելի մեծ շփոթութիւնների։

Քաղաքի տէրը, բացի Դավաչի Թաղից, այսօր սահմանադրականներն են, և նրանք, որոնք կասկածելի են համարվում, թագնված են, այսպէս ասած, մկան ծակերում։ Դրութեան այսպիսի անորոշութիւնն ուղղակի յուսահատական է. մարդ չը գիտէ թէ մի ժամ յետոյ ինչ պիտի պատահի։

6 յուլիսի

Գիշերս ժամը 9½-ից համարեա մինչև լոյս այնպիսի մի հրացանաձգութիւն եղաւ, որը սարսեցնում էր ամբողջ քաղաքը։ Երևակայելով չէ կարելի պատկերացնել մի այդպիսի դրութիւն։ Այսօր, ինչպէս և միշտ, հնարաւոր չեղաւ իմանալ գիշերվայ կատաղի հրացանաձգութեան ճիշտ պատճառները։ Խօսվում է, որ դավաչի-թաղեցիք յարձակվել էին մի կողմից զինանոցը գրաւելու, միւս կողմից՝ անջումանը ցրելու։ Ամենից ճիշտը մի քանի զինավաճառների խանութների կողոպտված լինելն էր։ Գիշերվայ տրաքտրաքոցին՝ աշխատողներ էին եղել հայոց թաղերի մի քանի հայ խանութներ բանալ, բայց անաջող։ Այսօր բանակցութիւններ են կատարվում։ Ռուսաց հիւպատոսը դիմեց Թէհրան խորհուրդ տալով շահին հրամայել մուշտէիդներին քաղաքից հեռանալու, նոյնպէս և Րահիմ-խանին և Սուջայի Նիզամին։

Այսօր երկրորդ անգամ յայտարարութիւն էր ցրված սահմանադրականների կողմից, որով խնդրում էին հիւպատոսին իրանց ներքին գործերին չը խառնվել։

«Нов. Время»-ի թղթակիցը ցանկացել է տեսակցել Սաթթար խանի հետ, բայց, ինչպէս ասում են, վերջինս չէ ընդունել։

Այսօր զինադադար էր. հրացանաձգութիւն չեղաւ։ Կողոպուտը թէ շրջակայքում և թէ քաղաքում աւելի մեծ ծաւալ է ընդունում։

Զինգօրի կարի մեքենաների խանութից գողացված է մօտ 3000 րուբլու ապրանք։

7, 8 և 9 յուլիսի

Այս երեք օրս Թաւրիզը ուղղակի պատերազմի մէջ էր գտնվում. առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը թնդանօթների և հրացանների որոտն ու տրաքտրաքոցը ականջ էր խլացնում։ Երկու կողմն էլ մեծ ոյժերով են կռւում։

Դավաչի թաղին օգնութեան եկաւ կրկին Րահիմ-խանը։ Երկու կողմից էլ բաւական մարդ ջարդվեց։ Սահմանադրականներից բաւական անզէն մարդ փչացաւ, որոնք զինված էին փայտերով, քարերով միայն։

Յաղթութիւնը մնաց մէջտեղում։

Մի կողմից կռիւը, մի կողմից էլ մզկիթում, հայոց թաղում, լաց ու կոծն է խաղաղութիւնը աղմկում։ Մոլլա և սէիդ հերթով բարձրանում են ամբիօն և ողբերգութեամբ զբաղեցնում ժողովրդին առաւօտից մինչև երեկոյեան ժամը 7-ը։

Ուշագրաւ էր շէյխ Ալասկեարի բողոքը աշխարհի թագակիրների դէմ, որոնք տեսնելով Իրանի ողբերգական վիճակը մարդասիրութիւն չունեն բարոյական ճնշում գործ դնելու շահի վրա և երկիրը խաղաղեցնելու։

Փողոցներում թափառող մուրացկանների լալագին ողբն ու հառաչանքն արիւն է կաթեցնում սրտերից։ Գիշերս գողացված է Մելիք-Զոհրաբեանների մագազինից բաւական ապրանք։ Շուկայի խանութների մեծ մասի ապրանքը դատարկված է տէրերից։

Քաղաքիս շրջակայքում գտնվող միակ հայ գիւղը կողոպուտի ենթարկվեց։ Տարել են մօտ 800 թումանի տաւար և ոչխար. առանց այդ էլ գիւղը գտնվում էր ծայրայեղ քայքայման մէջ, շնորհիւ տիրող կարգերի։

Կենսական մթերքները շատ թանգ են. ձուի հատը 4 շահի, մածունի լիտրը 5 ղրան, պանիրը՝ 8 ղ., միսը 10 ղ., եթէ ճարվի. հաց չը կայ. հաց անուան տակ ծախվում է գարու, թեփի ու յարդի մի խառնուրդ։ Քաղաքի ժողովրդի մեծամասնութիւնը սոված է գիշերում, կերակրվում են մեծ մասամբ մրգեղէնով։ Հաւատացած պիտի լինել, որ 2000-ից մէկ հոգի մսի համ չէ տեսնում։ Պարսիկների մէջ մի հատ զուարթ, կայտառ, առողջ դէմքի չէք պատահի. կարծէք ամենքը տարիներով խոնաւ բանտերում ապրած թշուառներ են։

10 յուլիսի, առաւօտեան

Այսօր դեռ հրացանաձգութիւն չը կայ։ Պօստատունը փոխադրված է, նամակներ ընդունում է մի հասարակ տան մէջ։ Ժամը 11-ն է, ուղարկում եմ նամակս։ Հեռագրաթելերը դարձեալ կտրված են։ Ռուսաց հիւպատոսը յայտնել է սահմանադրականներին, որ անգլիական գիծը օրական 15,000 թուման իրաւունք կունենայ պահանջելու կառավարութիւնից չը գործած օրերի համար։ Գնացողներ եղան գիծը կապելու։

Երէկ յարձակում է եղել պարսից հեռագրատան վրա՝ կողոպտելու նպատակով. տարել են մի քանի գործիքներ։ Երէկ յարձակվել են և փոխ-կառավարչապետի տան վրա, կողոպտել են գոմը, տարել են ձիեր։ Անիշխանութիւնը կատարեալ է։ Վերջին երեք օրվայ կռւում մեծ բազմութիւն է կոտորվել, մանաւանդ անզէն մարդկանցից, որոնք կողոպուտի նպատակով փողոցներում են եղել։

Ասում են, որ Թէհրանից նոր հեծելազօրք է ճանապարհված։ Երկիրը կործանման անդունդի եզերքին է օրօրվում։

Իբօ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 16 յուլիսի

Ժանտախտի դէմ կռւող յանձնաժողովը հաղորդում է, որ Աստրախանում յուլիսի 15-ին նորից հիւանդացել են խօլերայից 2, մեռան 2. ընդամենը յուլիսի 8-ին հիւանդացան 15, մեռան 7 հոգի։ Ցարիցինում յուլիսի 13-ին հիւանդացան 7, մեռան 3. էպիդեմիայի սկզբից հիւանդացան 25, մեռան 16 հոգի։ Խօլերայով հիւանդանալու կասկածելի մի դէպք նկատվել է Ցարիցինեան գաւառում, մի մահվան դէպք՝ Կամիշինում։ («Հ. Գ.»)

—

Պրօֆ. Լեսգաֆտի նոր գիմնազը՝ աշնանը իր դասընթացքները վերաբանալու համար, կրկին անգամ մերժման հանդիպեց։

Ներկայ կէս տարվայ ընթացքում ռուսաց սինօդը վարդապետներից և քահանաներից ստացել է 115 խնդիրներ, որով նրանք թոյլտուութիւն են ուզում մտնելու բարձրագոյն դասընթացքները։

—

Պետերբուրգից հեռագրում են «Баку» լրագրին.

Լուրերին նայելով, ներքին գործերի մինիստրի նախկին օգնական Գուրկօն նշանակվում է առանձին կարևոր յանձնարարութիւնների պաշտօնեայ Կովկասեան Փոխարքայի մօտ։ («Б.»)

ԳՐԷՅԻ ՃԱՌԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

—

Լոնդոն, 15 յուլիսի

Արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն քննութեան ենթարկելու ժամանակ շօշափվել է գլխաւորապէս մակեդոնական հարցը։

Գրէյը յայտնեց. «Ինչ վերաբերում է բարենորոգումները մտցնելու գործի դանդաղելուն, ես արդէն իր ժամանակին չեմ թագցրել ձեզանից, որ մենք մտադիր չենք եղել միայնակ գործելու, այլ միւս պետութիւնների հետ միասին։ Իրերի դրութիւնը Մակեդոնիայում առաջ էր եկել վատ կառավարութեան շնորհիւ, որը իրան անընդունակ զգալով կարգը պահպանելու՝ մի ազգութիւնը թշնամացնում էր միւսի դէմ փոխանակ եռանդուն և անաչառ միջոցներ ձեռք առնելու։ Դրա շնորհիւ ստեղծված դրութեան ու վարչական այդօրինակ մեթոդի դէմ մենք միւս պետութիւնների հետ միասին ժամանակ առ ժամանակ բողոքում էինք, իսկ այժմ բոլորովին յանկարծակի կերպով լսվեց բողոքի ձայնը թիւրքական զօրքի և մուսուլման ազգաբնակութեան կողմից։ Արտասովոր երևոյթ է, որ տեղի ունեցած դէպքերը ոչ միայն չուժեղացրին անկարգութիւնները, այլ և միաժամանակ երաշխաւորեցին հանգստութիւնն ու ապահովութիւնը, որ, հասկանալի է, շատ մխիթարական է։ Հարկաւոր է նկատել, որ նոր դրութիւնը ստեղծվում էր ուղիղ այն միջոցին, երբ մենք ներկայացրինք միւս պետութիւններին մեր առաջարկը՝ հրոսակախմբերը ճնշելու նպատակով թռուցիկ զօրամասեր կազմակերպելու մասին,—և ահա հէնց այդ վայրկեանում հրոսակախմբերը անյայտանում են։ Եթէ արդարև հրոսակախմբերը կը ցրվեն, այն ժամանակ, ի հարկէ, անհրաժեշտութիւն չի զգացվի թռուցիկ զօրամասեր կազմել նրանց ոչնչացնելու համար։ Ներկայ մոմենտում մենք ողջունում ենք նոր ստեղծված դրութիւնը (հաւանութիւն)։ Կարծում եմ, որ նա կը տևի, և Բուլգարիան, Սերբիան ու Յունաստանը ամեն ջանք գործ կը դնեն, որպէսզի նա տևողական լինի։ Կարծում եմ նոյնպէս, որ Թիւրքիային սահմանակցող պետութիւնների կառավարութիւնները միջոցներ ձեռք կառնեն արգելելու իրանց սահմաններում հրոսակախմբերի կազմակերպումը և օթևան տալը։ Հաւասարապէս յոյս ունեմ, որ եւրոպական բոլոր պետութիւնները ամեն կերպ կաշխատեն, որպէսզի նոր ստեղծված դրութեան բարերար ազդեցութիւնը աւելի ևս զարգանայ ապագայում։ Այն նպատակները, որոնց մենք մինչև օրս հետևել ենք Մակեդոնիայում, երբէք քաղաքական չեն եղել։ Ես կուզենայի ընդգծել, որ Անգլիայի համար մակեդոնական հարցը ներկայանում է իբրև լաւ կամ վատ կառավարութեան հարց։ Մենք այդ հարցում ակտիվ կերպով ասպարէզ եկանք, որովհետև լաւ գիտենք, որ ոչ միայն քրիստոնեայ ազգաբնակութիւնն է տառապում այդ վատ կառավարութիւնից, այլ և գիւղական մահմեդական ազգաբնակութիւնը։ Այդ պատճառով մեր միակ ցանկութիւնն էր տեսնել երկրի գլուխ անցած կառավարութիւն։ Եթէ լաւ թիւրքերը այժմ մտադիր են բարելաւել ամբողջ երկրի դրութիւնը, եթէ նրանք երաշխաւորում են, որ մահմեդականներն ու քրիստոնեաները հաւասարապէս օգուտ կը քաղեն կառավարութեան այդ տեսակ բարելաւումից, այն ժամանակ մակեդոնական հարցը լուծված կը լինէր, թիւրքերը կանէին այն, ինչ որ նրանցից պահանջում ենք արդէն անընդհատ տարիներ շարունակ։ Ի հարկէ, աւելի լաւ կը լինէր, եթէ հարցը լուծվէր այդ եղանակով, քան թէ բռնի ոյժով հարկադրէին համաձայնութիւն տալ մի քանի մասնակի բարենորոգումներ մտցնելու։ Մենք պէտք է սպասենք անցքերի զարգացման շարունակութեանը։ Ներկայ մոմենտում մեր համակրութիւնը պէտք է լինի նրանց կողմը, որոնք ձգտում են աւելի շատ ազատութիւն, հաստատակամութիւն և անաչառութիւն մտցնելու երկրի կառավարութեան մէջ։ Ես վերջինը կը լինեմ, որ անաջողութիւն կը նախագուշակեմ նրանց մի այդպիսի գործում (հաւանութիւն)։ Մենք ոչ մի կերպով չենք ցանկանում սառեցնել նրանց ոգևորութիւնը գործունէութեան սկզբում (հաւանութիւն)։ Նոյնպէս ուշադիր կերպով ու լրջօրէն, ինչպէս որ մինչև այժմ, մենք կը ձգտենք ապահովելու Մակեդոնիայի և Թիւրքիայի միւս մասերի համար լաւ կառավարութիւն, որի համար մենք լիազօրված ենք օրինական դաշնագրերով։ Այժմս անհնարին է ասել, թէ ջանքեր հարկաւոր կը լինեն այդ նպատակին հասնելու համար։ Մենք ողջունում ենք սուլթանի շնորհած սահմանադրութեան մասին ստացված լուրը, թէև չենք թուլացնի մեր ուշադրութիւնը և չենք հրաժարվի մեր ձգտումից՝ անել ինչ որ կախված է մեզնից Մակեդոնիայի ապագայ զարգացման համար, սակայն ներկայումս մենք պէտք է համակրութեամբ վերաբերվենք և սպասողական գործունէութեան եղանակ ընդունենք»։

Ապա դառնալով ընդհանուր քաղաքականութեան հարցերին, Գրէյը նկատեց, թէ ամենևին ցանկալի չէ, որ անգլիական մի քանի շրջաններ միտք յայտնէին՝ թէ իբր անգլիական քաղաքականութեան նպատակն է առանձնացած դրութեան մէջ դնել Գերմանիային։ «Ցանկալի չէ նոյնպէս, որ Գերմանիայի հասարակական կարծիքի մի որևէ մասը այդպիսի կարծիք ունենար։ Երկու մեծ ազգերի զգացմունքները կարող են տարէ-տարի փոխվել, բայց համարձակվում եմ ասել, որ վերջին քսան տարիների պատմութիւնը կազմող ամեն մի անաչառ պատմաբան պէտք է խոստովանէ, որ Մեծ Բրիտանիան ամենևին չէ վարվել իբրև մի այնպիսի պետութիւն, որը խոչընդոտ է հանդիսանում բարի յարաբերութիւնների հաստատման։ Վերջին տարիներս համաձայնութիւն է կայացվել երկու պետութիւնների հետ, որով վերացան Անգլիայի ու Ֆրանսիայի միջև գոյութիւն ունեցող տարաձայնութիւններն ու վտանգը, որոնք սպառնում էին խախտել խաղաղութիւնը Անգլիայի ու Ֆրանսիայի միջև մի կողմից և Անգլիայի ու Ռուսաստանի միջև միւս կողմից։ Դեռ ես մօտ ժամանակներս ասել էին, որ գերմանական քաղաքականութիւնը ամենևին չէ հիմնված այն բանի վրա, որպէսզի թշնամութիւն ստեղծվի ուրիշ պետութիւնների միջև։ Ես ուզում եմ աւելացնել, որ մեր քաղաքականութեան մէջ մենք ամենևին չենք ձգտում, որ մեր բարեկամութիւնը մի ուրիշ պետութեան հետ թշնամական բնաւորութիւն ունենայ ուրիշ պետութիւնների նկատմամբ։ Մենք պէտք է կատարեալ ազատութիւն ունենանք մտերմութիւն ընտրելու մէջ, բայց միևնոյն ժամանակ մենք ամենևին չենք ձգտում ոևէ մէկին առանձնացնել։ Երբ խօսեցինք առանձնացման մասին, շատ տեղին է յիշեցնել, որ Գերմանիան էլ ունի երկու դաշնակից և մենք այդ միութիւնը չենք համարում մեր դէմ ուղղված։ Այնուհետև հարկաւոր է յիշեցնել, որ մենք համաձայնութիւն ենք կայացրել Ֆրանսիայի ու Ռուսաստանի հետ, որոնց բնագիրները յայտնի են ամբողջ աշխարհին, մինչդեռ եռապետական դաշնակցութեան որոշումները մինչ այժմ էլ հրատարակված չեն։ Այդպիսով ամենաչնչին անգամ հիմք չը կայ ենթադրելու, որ այդ համաձայնութիւնների պատճառն ու նպատակն է ձգտել առանձնացնելու Գերմանիան» (հաւանութիւն)։

Դիլկի արած այն նկատողութեան առիթով՝ թէ Անգլիայի և Ռուսաստանի միաբան գործունէութիւնը մակեդոնական հարցում այնպիսի տպաւորութիւն է թողնում, որ երբ այդ երկու պետութիւնները մտադիր են որևէ գործողութիւնների դիմել առանց միւս պետութիւնների, Գրէյը բացատրեց, որ փետրվարին հրատարակված առաջարկները, որ արվել էին առանց միւս պետութիւնների համաձայնութիւնը ստանալու, առաջ էր եկել ստեղծված իրերի դրութիւնից... որպէսզի Անգլիան կամ բոլորովին հեռու պահէր իրան բարենորոգումների գործից, կամ թէ գործին աւելի իրական բնաւորութիւն տար։ «Անգլիան վստահաբար հաղորդել էր Ռուսաստանին իր առաջարկները, որպէսզի Ռուսաստանը հնարաւորութիւն ունենար հանդէս գալու ուրիշ առաջարկներով, միևնոյն ուղղութեամբ, աւելի ընդունելի մնացեալ պետութիւնների համար։ Այդ առաջարկները մենք քննել էինք Ռուսաստանի հետ միասին. մենք նախ ուզում էինք պարզել մի ընդարձակ նախագծի հիմունքները։ Մեզ համար կարևոր էր իմանալ ռուսաց առաջարկների բովանդակութիւնը, որպէսզի պարզենք մեզ համար՝ կարո՞ղ ենք արդեօք նրանց անկեղծ աջակցութիւն ցոյց տալ։ Մնացեալ պետութիւնները պատրաստականութիւն յայտնեցին, մինչև իսկ ուրախութիւն, ընդունելու ռուսաց առաջարկութիւնը» (շարունակութիւնը ջնջված է)։ Ապա Հաագայի կոնֆերենցիայի մասին խօսելուց յետոյ, Գրէյը անցաւ Կոնգոյի խնդրին և յայտնեց, որ ողջունում է մնացեալ պետութիւնների գործակցութիւնը. Անգլիան պէտք է ուրախանայ, որ մենակ իրան չէ վիճակվում Կոնգոյում բարենորոգումներ մտցնելու գործի ծանրութիւնը կրել։ Ի վերջոյ Գրէյը բացատրութիւն տուեց կառավարութեան արված հարցապնդումների մասին։ Գրէյի ճառից յետոյ ընդունվել է արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն։ («Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Վաղարշապատ, 14 յուլիսի

Ամսիս 13-ին Վաղարշապատի ս. Աստուածածին եկեղեցում նշանակված էր կաթողիկոսական պատուիրակների ընտրութեան երկրորդ և վերջին ժողովը։

Գործակալ Սարգիս ք. Երևանի փոխ-թեմակալի դրութիւնը, ընտրութիւնների վերաբերեալ, կարդալուց յետոյ՝ առաջարկեց ծխականներին, որոնց թիւը 150-ից անց չէր լինի, ընտրել նախագահ և քարտուղար։

Նախագահ ընտրվեց Յ. Մուշեղեանը, իսկ քարտուղար՝ Լ. Ալլահեանը։

Որպէսզի ժողովը երկար չը տևի, ընտրութիւնը կատարվեց բաց. միաձայն ընտրվեցին հետևեալ չորս անձնաւորութիւնները՝ Ե. Թորոսեան, Լ. Ալլահեան, Յ. Մուշեղեան և Թ. Թադէոսեան։

Շրջանային պատուիրակների ընտրութիւնը նշանակված է առաջիկայ կիրակի,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

—

Լոնդոն, 18 յուլիս (Ն. տ.)

Քանի մը օրէն անգլիական պարլամենտը կը դադարեցնէ իր գործերը ամառնային արձակուրդի համար և աշնանային նիստը կը սկսի նոյեմբեր 14-ին միայն։ Սա մօտաւորապէս կը կազմէ 2 տարուան ազատական կառավարութիւն, անօրինակ ջախջախիչ մեծամասնութիւնով մը իրենց պահպանողական հակառակորդներուն վրայ։

Ազատական կառավարութեան առաջին տարուան գործունէութեան վրայ յաճախակի գրած ըլլալով, այս անգամ կուզեմ ակնարկ մը նետել իրենց վերջին գործունէութեան վրայ, յուսալով թէ հետաքրքրական կը լինի այդ դիտողութիւնները ալ։ Եթէ մէկէն յայտարարենք, թէ ազատական լիբերալները բացարձակապէս յուսախաբ ըրին իրենց հետևորդները և ընկերական բարենորոգմանց (social reforms) յօրդառատ խոստումներէ վերջ իրենց բովանդակ ոյժն ու եռանդը կեդրոնացուցին անպէտ ու ճղճիմ երկրորդական խնդրոց վրայ, անտեսելով ամենէ աղաղակող պէտքերը հասարակութեան համար, բնաւ սխալ ներկայացուցած չենք ըլլար իրերու ներկայ կացութիւնը։ Առաջին տարին գոնէ կրցան իրենց խոստման վրայ շարժիլ և հո՛ն հանել դաստիարակութեան նոր օրէնագիծ մը և Հար. Աֆրիկէի չինական կուլիներու սքանդալներու վերացման եղանակ մը։ Ասոնց կարևորագոյնը, դաստիարակութեան գործը, որ շնորհիւ քանիմեայ պահպանողական իշխանութեան տէրունական եկեղեցին պատկանող կղերականութեան մենաշնորհն էր դարձած, դուրս նետուեցաւ լորդերու ժողովէն և ոչնչութեան դատապարտուեցաւ հասարակաց ժողովին զոհած բոլոր ճիգերն ու ժամանակը։ Այս անպիտան վարմունքն էր լորդերու կողմանէ, որ առիթ տուաւ հանգուցեալ մինիստր նախագահ Հէնրի Քէմբըլ-Բէնըրմէնի դուրս ժայթքել սա սպառնալաձև խօսքերը լորդերու ժողովին դէմ.—«Միջոց մը պէտք է գտնուի, միջոց մը պիտի գտնուի, որպէսզի իրեն ներկայացուցիչներուն բերնով արտայայտուած ժողովրդին ձայնը տիրէ այս երկրին մէջ»։ Չբաւականանալով այսքանով հանգուցեալ մինիստր նախագահը առաջ հետևող արքայական ճառին մէջ զետեղեց լորդերու ժողովը բարեփոխելու անհրաժեշտութիւնը... բայց, ժամանակները փոխուեցան։ Ան մեռաւ, ամենէ ռամկավար ու սիրուած անդամը հասարակաց ժողովին, և իրեն յաջորդեց Ասքուիթ, imperialist մը, սըր Էդուարդ Գրէյի դպրոցէն, և լորդերու խնդիրը ոչ միայն մոռցուեցաւ, այլ և մին միւսին ետևէն լորդեր կը շինուին թագաւորական ծննդեան և այլ տարեդարձներուն առթիւ, և ամենէ անհաշտ ու ոխերիմ թշնամին լորդերուն, Ջօն Մօրլի, ժամանակին «Անգլիացի Ռոբէսպիէռը» ճանչցուած իր խիզախ ճառերուն և գրութիւններուն համար իբրև ռամկավար առաջնորդ և անհաւատ մը, այսօր լորդ մըն է եղած և լորդերու ժողովին մէջ կը բազմի...

Ազատականութեան ամենէ փայլուն աստղերուն այսպիսի յեղյեղուկ ընթացքը բնական է որ դժգոհութիւն յարուցանէր շարքերուն մէջ և բանուոր դասին, ինչպէս որ ալ եղաւ։ Միայն թէ, դժբաղդաբար, ազատական մինիստրները չկրցան խախտուած հաւատքը վերստանալու միջոցներ գտնել և ժողովրդին վստահութիւնը շահիլ այլ կողմանէ քանի մը ազդու բարենորոգումներով։ Եւ այսօր, երբ իր նիստը կը փակէ պարլամէնտը, հազիւ թէ յիշատակութեան արժան կէտ մը կը գտնուի՝ որով հասարակութիւնը գրաւել հնար ըլլայ։ Անցուեցան, օրինակի համար, մի քանի օրինագծեր, որ պահպանողական մինիստրութիւն մըն ալ շատ դիւրաւ կրնար մէջ բերել, առանց ինքզինքը ինկածին ու թշուառին բարեկամը ճանչցնելու յաւակնութիւններ ունենալու։

Միակ յարգանքի արժան կէտ մը, որ յառաջ բերաւ ազատական կառավարութիւնը և որ արդէն կարելի է վերջացած իրողութիւն համարել, այդ ալ ծերերու թոշակ տալու խնդիրն է, որ ամենէն աւելի վէճի նիւթ տուաւ և դեռ ալ կը վիճուի, միշտ ի հաշիւ ազատական մինիստրութեան [illegible] վարմունքին։ Թող ներուի ինձ ընկերական այս մէկ էական հարցը, և Անգլիոյ պարագային՝ նոր հարցը, քիչ մը մօտէն ծանօթացնել ընթերցողաց և պարզել այստեղ այդ խնդրին pro և con ը համակիրներէ և հակառակորդներէ համահաւասար։

Ծերերուն թոշակ յատկացնելու խնդիրը շատ հին է Անգլիա։ Դեռ տասնեակ տարիներ առաջ Չէմբըրլէն, առաջին անգամն ըլլալով, հարցը գլորած է, և պահպանողական ու ազատական, շատ գրաւիչ նիւթ մը նկատելով, ջանացած են առով քուէ գողնալ ընտրողներէն, միշտ խոստանալով սոյն կէտը անմիջապէս կարգադրել, բայց, հակառակ որ պահպանողականներ ամբողջ քսան տարի միջոց ունէին, մատերնին իսկ չը շարժեցին ատոր լուծման համար։

Անցեալ տարի, Ասքուիթ, այն ժամանակ դեռ ես արքունի գանձապահ, երբ իր առաջին բիւտջէն կը ներկայացնէր, խոստացաւ շուտով այս ծերերու թոշակի հարցը հաստատ և իրական հողի վրայ դնել ու այս տարի ալ յայտնեց, թէ արդէն որոշած են օրէնքի կարգ անցնել և, իբրև այդպիսին, յանձնուեցաւ պարլամէնտին։

Պէտք է խոստովանիլ, թէ ազատականներու այս քայլը թէև խիզախ, միանգամայն խիստ ճարպիկ ալ էր։ Վերջին ամբողջ քսան տարին, աննշան ընդմիջումով մը միայն, պահպանողականներ, ունենալով ամեն առիթ, խոստումներով բաւականացած էին միայն. մինչ այսօր ազատական կառավարութիւն մը իր երկրորդ տարուայ պաշտօնավարութեան արդէն իսկական գործի կը սկսէր։ Լաւ ծրագրուած խնդիր մըն էր, բայց, ըստ սովորականին, ազատականներ շատ երկչոտ գոյն մը տալով հարցին՝ մեծաքանակ թշնամիներ ստեղծեցին։ Հակառակորդ ունեցան ծայրայեղ արմատականներ, բազմաթիւ ազատականներ, բանւորական ու ընկերվարական կուսակցութիւններ մէկ կողմէն, իսկ պահպանողականներ միւս կողմէն։ Առաջիններու հակազդութիւնը այն էր թէ՝ առաջադրուած ծրագիրը բաւականաչափ առատաձեռն չէր, թէև կընդունէին զայն սկզբունքով։ Բիւտջէն կը խոստանար 5 շիլինգ կամ երկու և կէս րուբլի շաբաթական 70-է վեր ծերերու, իսկ այն պարագային, որ զոյգը միասին մէկ յարկի ներքև կապրին, եօթ և կէս շիլինգ երկուքին համար։ Ու այս իսկ տալը այնքան դիւրին հարց չէր։ Նախ քան թոշակ տրուիլը, թոշակառուն պիտի ենթարկուէր խիստ քննութեան, և եթէ վերջին 10 տարին անարատ անցեալ մը ունեցած է՝ այն ատեն միայն պիտի ընդունելի ըլլայ։ Եթէ բանտարկուած է 1 կամ 2 անգամ այդ ժամանակամիջոցին, ոևէ յանցանքով, նոյն իսկ գինովութեան համար, դուրս կը մնայ յիշեալ առանձնաշնորհումէն։ Շարք մը ազատականներ պահանջեցին, որ ծերերու տարուան սահմանը 65 ըլլայ և քննութեան փորձերն ալ աւելի թեթև, մինչ բանւորական կուսակցութիւններ, շնորհաւորելով հանդերձ այս ծրագրին երևումը վերջնապէս, պահանջեցին,—տարիքի սահման՝ մարդուն 65 և կնոջ 70, ու շաբաթական 10 շիլին, մատչելի բոլորին հաւասարապէս, առանց ընդունողին անցեալը պրպտելու։ (Օտարներ դուրս են սոյն օրէնքէն, բացի երբ անգլիական քաղաքացի են և առ նուազն 10 տարի անգլիական հողի վրայ ապրած)։ Եթէ չափազանց ընդդիմութիւն ցոյց տրուէր թոշակի գումարին դէմ, յայտնած պաշտամսիս 20-ին, դարձեալ Վաղարշապատի ս. Աստուածածին եկեղեցում։

Չը մոռանամ ասել, որ Շողակաթի վանքն այժմ ծխական եկեղեցի է համարվում։ Դրա համար Վաղարշապատը 4 պատուիրակ ընտրեց։

Թունիկ

—

Գորիս (Զանգ. գաւ.), 11 յուլիսի

Սրանից մի քանի տարի առաջ գաւառապետ Գֆելլերը հարց էր բարձրացրել Գորիսում գիմնազիա բաց անելու։ Գաւառապետի բարձրացրած այդ հարցը անաջողութեան հանդիպեց այն պատճառով, որ մի քանի պատւաւոր մարդիկ ընդդիմացան գիմնազիայի հաստատմանը Գորիսում։ Գաւառապետն այդ ընդդիմացողներին աքսորեց Գանձակ։ Վերջապէս գաւառապետ Գֆելլերը աջողեցրեց թոյլտուութիւն ձեռք բերել Գորիսում գիմնազիա բացելու։ Բայց շնորհիւ միջոցների սղութեան, այդ համակրելի գործը երեսի վրա է մնացած մինչև այսօր։

Գորիսը, որպէս Զանգեզուրի գաւառական քաղաքը և կենտրոնը, պէտք է օրինակ լինի ուրիշներին և աշխատի գաւառացիների ուշադրութիւնը գրաւել դէպի իրան։ Այդ տեսակէտից՝ ցանկալի էր, որ Գորիսի հասարակութիւնը, ինչպէս և զանազան քաղաքներում գտնվող զանգեզուրցի երիտասարդները շտապէին գործի դիմել և այդ համակրելի հաստատութիւնը գլուխ բերել իրանց մայրենի քաղաքում։

Ս. Կ.

—

Մերվ, 13 յուլիսի

Այսօր կայացաւ կաթողիկոսական պատուիրակների ընտրութեան երրորդ և վերջին ծխական ժողովը։ Նախընթաց ժողովներում ընտրված 4 թեկնածուներից ձայների մեծամասնութեամբ ընտրվեցին վաճառականներ Յ. Աւետիսեան և Դ. Մելիք-Մկրտիչեան, որոնք պէտք է գնան ներկայ գտնվելու Աստրախանում, Աստրախանի թեմի պատգամաւորի ընտրութեան։ Հաւանական է, որ վերջիններս չը գնան, այլ իրանց ձայնը տան Աստրախան գնացող որևէ մէկ պատուիրակի։

Մանասէ

—

Պեատիգորսկ, 13 յուլիսի

Այսօր տեղիս ծխատէր քահանայի նախագահութեամբ կայացաւ երկրորդ և վերջին ընդհանուր ծխական ժողով, մի պատուիրակ ընտրելու կաթողիկոսական թեմական պատգամաւորի ընտրութեանն Աստրախանում մասնակցելու համար։ Ծխական քահանան ժողովը բանալով առաջարկեց նախագահ ընտրել։ Նախագահ ընտրվեց Աբրահամ քահ. Շխինեանց, իսկ քարտուղար պ. Սուքիասեան։ Նախագահը կաթողիկոսի թեկնածութեան հարցը դրեց ժողովականների առաջ, որպէսզի ընտրված պատգամաւորը իրաւունք ունենայ պաշտպանել մեր Պեատիգորսկի և շրջակայի ժողովրդի թեկնածուների անունները։ Երկար թեր և դէմ կարծիքներից յետոյ եկան այն եզրակացութեան, որ մեր պատուիրակը պաշտպանէ առաջինը Իզմիրլեանի և երկրորդը Վարժապետեանի թեկնածութիւնը, և այնուհետև անցան ընտրութեան։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեց պատուիրակ պ. Յովսէփ Սվեչնիկեանց։

Մեզանում եղանակը շատ հիանալի է. չը նայած մայիսի երաշտին, այս տարի համեմատած անցեալ տարվան խոտը առատ է, նոյնպէս հացահատիկները առատ բերք են խոստանում։ Այս տարի համեմատած անցեալ տարվան այստեղ ամարանոց եկողների թիւը շատ քիչ է, բնակարանների մեծ մասը համարեա դատարկ է։

Արծւանիկ

ՄԵՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

—

Օրդուբաթ, 13 յուլիսի

Մեր ժողովուրդը նորից վերադառնում է այն ժամանակին, երբ կինը ընդունված էր որպէս մի անխօս արարած, երբ նա դատապարտված էր լոկ տանը նստելուն և տնային հոգսերով զբաղվելուն, երբ նա իրաւունք չունէր դուրս գալու օտար տղամարդու երես, երբ զրկված էր հասարակական կեանքում իր դերը կատարելուց։

Գաւառական քաղաքներում կամ գիւղերում կամենում ես ձեռնարկել մի ներկայում, որից, ինչպէս յայտնի է, նախ ժողովուրդը կրթվում է, անցնելով գործող անձանց տպաւորութիւնների տակ, և երկրորդ՝ օրերի ու տարիների հոգսերի, ցաւերի ծանրութեան տակ ճնշված, մէկ օր կարողանում է զուարճանալ հոգեպէս, և հեռանում է ներկայացման վայրից այդ օրը ցաւերը մոռացած։ Բայց հէնց առաջին քայլում հանդիպում ես մի անխորտակելի արգելքի։

Օրիորդ չը կայ։

Ընտրել ես պիէսան, բայց օրիորդի դեր կատարող չը կայ։ Տղաներից անյարմար է, կան շատ ու շատ դժուարութիւններ, իսկ այնպիսի պիէսաներ, ուր չը լինի օրիորդի դեր—շատ քիչ է, եղածն էլ անյարմար կամ անհամապատասխան և կամ արդէն խաղացվել է։

Դիմում ես օրիորդի։ Օրիորդը պատասխանում է. «Կը գայի ամենայն սիրով, բայց...»։ Կամենում ես իմանալ թէ էլ ինչ «բայց». պատասխանում է. «Բայց վախում եմ հասարակութեան խօսելուց, և կամ գուցէ ծնողներս արգելեն»։

Խեղճ օրիորդներ...

Այո, դուք ուղղակի բանտարկութեան էք դատապարտված և բանտարկութիւնը դրանից վատթար չէ կարող լինել։ Եթէ բանտարկեալը բանտի դռնից մէկ քայլ անի, նրան իսկոյն կը տապալեն գնդակի մի հարուածով։ Նոյնն էլ ձեզ հետ կը պատահի, եթէ դուք ձեզ համար տգէտների գծած շրջանակից մի քայլ անէք։ Իսկոյն ձեզ կը ռմբակոծի հասարակութիւնը իր խօսքերի տարափով, նրա առօրեայ խօսակցութեան նիւթը կը դառնաք և այլն։

Ու ձեզ մեղադրել երբէք չէ կարելի...

Ե՞րբ պիտի արթնանայ մեր գաւառական հասարակութիւնը ու տեսնէ իրանից մի քանի վերստ հեռաւորութեան վրա եղած գլխաւոր քաղաքներում կատարվածները։

Ե՞րբ պիտի զգայ, որ իր տգիտութեամբ, իր խաւարամտութեամբ ընդհանուր առաջդիմութեան մեծ արգելք է հանդիսանում։

Սղօ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Շուշի, 14 յուլիսի

Մօտ երեք շաբաթ սրանից առաջ, «դերասանների» մի փոքրիկ խմբակ (թւով 4 հոգի) մուտք է գործում Շուշի և մտադրվում է մի շարք ներկայացումներ տալ՝ ու այդպիսով Շուշու հայ հասարակութեան «գեղարուեստական ճաշակը զարգացնել»։ Իսկ մինչև այդ՝ «նոյն նպատակով»՝ շահախնդիր սիրողների մի յայտնի խմբակ, յունիսի 20-ին, առանց մի րոպէ նախօրօք լուրջ մտածելու իր անելիքի մասին ու կշռադատելու իր թոյլ ու անկարող ույժերը, պատերին էր կպցրել գոյնզգոյն աֆիշաներ, որից իմացվում էր, որ յունիսի 28 ին խաղալու են Ալ. Ահարոնեանի «Արցունքի հովիտը» դրաման 4 գործողութեամբ։

Եւ որպէսզի կարողանային շատ հասարակութիւն գրաւել, հետևապէս և շատ շահվել, գրել էին, որ առաջին անգամն է, անտրակտներում կը նուագէ մուզիկա և սազանդար, պարեր եւրոպական և ասիական։

Գլխաւոր դերը յանձնում են «դերասան» Բերոյեանին։

Մի կողմ թողնելով այն, որ Բերոյեանի տկար ուժերից միանգամայն վեր է եղել Ասլանի դերը, մի կողմ թողնելով և այն, որ նա չը կարողացաւ գոնէ բաւարար կերպով Ասլանի բողոքող ու ըմբոստ շեշտերը հնչեցնել, պէտք է ասենք, որ պարոնը դերը չը գիտէր, և այդպիսով առաջին իսկ քայլից ցոյց տուեց, որ ոչ լուրջ է և ոչ էլ համեստ։

Չենք խօսում մնացած դերակատարների մասին, որովհետև սրանք դերերը չիմանալուց զատ, աւելի քան ծիծաղելի էին իրանց անմտածած ու անմիտ խաղով։

Անպակաս չէինք լինի, եթէ չը յիշէինք, որ յուշարարը աւելի ոգևորված էր կարդում ու ծխում, քան թէ դերակատարները խաղում էին—պարում։

Յուլիսի 1-ին «հայ դերասանական ընկերակցութիւնը» իր դերի մէջ էր։ Մասնակցում էին և սիրողները։ Խաղացին «Հրէաներ», դրամա 4 գործ., հեղ. Չիրիկովի։ Հասարակութիւնը քիչ էր, խաղը՝ թոյլ։ Մի բան միայն գովելի էր. մուզիկա չը կար, ոչ էլ սազանդար։

Յուսակտուր «դերասանները» ճարները կտրած դիմում են Մանգլիս՝ Աբելեանին ու խնդրում նրա գալուստը։ Իսկ մինչև վերջինիս գալը, փորձում են մի բան շահած լինել։ Յուլիսի 8-ին խաղում են «Տասնեօթ տարեկաններ» դրաման և «Նախ մեռան, ապա ամուսնացան» կօմեդիան։ Մի զարմանք, ընթերցող, եթէ ասեմ, որ դահլիճի և այլ մանր-մունր ծախսերը ընդհանուր մուտքից հանած՝ զուտ արդիւնք մնացել է... 63 կոպէկ։

Այս անգամ արդէն լքումը կատարեալ էր։

Եւ խեղճերը օրեր էին համարում ու աչք սևեռում դէպի Աբելեանն ու նրա գալուստը։

Այսօր արդէն Շուշումն է տաղանդաւոր արտիստը։ Հրաւիրված է 4 ներկայացման համար։ Ուրաքանչիւր խաղի համար ստանալու է 60 ր.։ Իսկ յօբելեանի կէսը միայն։

Առաջին ներկայացումը՝ «Դոկտոր Շտոկման» նշանակված է վաղը, յուլիսի 15-ին։ Յուսով ենք, որ Շուշու ինտելիգենցիան փառաւորապէս կը պատւէ հայ թատերական խաւար բեմի վրա լուսատու և շողշողուն աստղերից մէկին։

Էվերստ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Երէկ, ամսիս 17 ին, Արաս-Արաղեան հրապարակի վրա գտնվող Խուդադեանի որբանոցին կից կառուցվող շէնքի կապալառուի վրա մի քանի անյայտ մարդիկ սկսեցին կրակել ատրճանակից։ Կապալառուն էլ ինքնապաշտպանութեան դիմելով կրակել է չարագործների վրա, երկու կողմերն էլ մնացել են անվնաս, կրակողները փախել են։ Ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել չարագործներին բռնելու։

◆ Յուլիսի 16-ի երեկոյեան ժամը 10½-ին Վօզնեսենսկայա փողոցում № 26 տան մէջ գտնվող պաշտօնաթող գնդապետ Աւետիք Շադինեանի բնակարանին մօտենում է մի անյայտ երիտասարդ և, զանգը տալով, խնդրում է յայտնել Շադինեանին, որ նա գործ ունի նրա հետ։ Շադինեանը ընդունել է առանձնասենեակում։ Տասը րոպէ խօսելուց յետոյ յանկարծ լսվում է ներսից Շադինեանի աղաղակը, և երբ տնեցիք ներս են վազում՝ տեսնում են յատակի վրա ընկած Շադինեանին, որին երեք դաշոյնի հարուածներով վիրաւորել էին կողքից և կրծքից։ Անծանօթ երիտասարդը կարողանում է իսկոյնևեթ անյայտանալ։ Վիրաւորված Շադինեանը Միքայէլեան հիւանդանոց տանելիս ճանապարհին վախճանվել է։ Շադինեանը ըստ երևոյթին լաւ ճանաչում էր չարագործին, բայց չը նայելով հարազատների խնդիրքին չուզեց նրա անունը տալ։ Սպանութիւնը ըստ երևոյթին կատարված է անձնական վրիժառութեան հողի վրա։ Չարագործին գտնելու համար քննութիւն է կատարվում։

◆ Մեզ հաղորդում են, որ Հին-Նախիջևանում յուլիսի 20-ին կայանալու է պատուիրակների ժողով թէ յաջորդ ընտրելու և թէ Երևանի թեմի կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեանը, որ կայանալու է առաջիկայ սեպտեմբերի 20-ին, մասնակցելու համար երկու լիազօր ընտրելու նպատակով։ Այդ ընտրութեանը մասնակցելու համար Հին-Նախիջևան են հաւաքվելու նաև Մեղրիի շրջանի պատգամաւորները՝ թւով 26 հոգի։ Մեղրիի հասարակութիւնը գաղտնի քուէարկութեամբ, համարեա միաձայն, պատուիրակ է ընտրել իր համագիւղացի՝ «Մշակի» աշխատակից Լ. Դանիէլեանին։

◆ Մեզ խնդրում են հրատարակել հետևեալը. «Մի քանի օր առաջ քաղաքիս Վերա թաղի Պետրօվսկայա փողոցի № 26 տանը ապրող Տ. Ի.-ի կինը մի տատմօր խորհրդով ընդունում է մի այնպիսի հեղուկ, որի շնորհիւ իբր թէ պիտի ազատվէ երեխայ ծնելու ընդունակութիւնից։ Դեղը (որի ինչ բաղադրութիւնից լինելը իմանալ չը կարողացանք) իսկոյն ներգործում է ոչ թէ միայն ծննդաբերական գործարանին, այլ նա տարածվում է ամբողջ մարմինը և մի օրվայ մէջ նրան մահվան դուռը հասցնում։ Ի զուր նրա տէրերը ջանք էին գործ ածում ազատելու թշուառ զոհին մահի ճիրաններից, տանելով ծննդաբերական կայարան և բժիշկների օգնութեան դիմելով, և ի զուր թէ նրա տէրերը և թէ խոստովանեցնող քահանան աշխատում էին մեռնողի շրթունքներից կորզելու նրան մահվան դատապարտողի անունը. նա գաղտնի պահեց և հետը տարաւ գերեզման։ Այդ ազնւութեան զոհը մի աղքատ արհեստաւորի ամուսին էր, որ չքաւորութեան պատճառով չը կամենալով որդեկրանցով ծանրանալ՝ իր ետևից թողեց չորս մանրիկ զաւակներ որբ և զուրկ խնամող ձեռքից, որոնցից մէկը (5—6 տարեկան տղայ երեխայ) մօր հոգատարութիւնից զրկվելուց յետոյ կառքի հետևից ընկնելիս՝ ընկնում է տակը և սրունքներից ծանր ջարդուածքներ ստանում։ Ո՞վքեր են կոչված այսպիսի չարիքների հեղինակների դէմ կռուելու, ինչո՞ւ չեն կատարում իրանց պարտքը»։

◆ Մեզ հաղորդում են, որ Նուխու գաւառի Դաշբուլաղ գիւղում յուլիսի 20-ին պաշտօնապէս կը բացվի նոր հաստատված ձրի ժողովրդական «Քերծ» գրաընթերցարանը։ Յիշեալ հաստատութեանը թէ փողով և թէ գրքերով կարելի է նպաստել հետևեալ հասցէով՝ Нуха, К. Гарибову, для Дашбулагской библ. „Керцъ“.

◆ Թիֆլիսի մանկաբարձուհիների նորակազմ ընկերութիւնը նահանգական իշխանութեան առաջ միջնորդութիւն է յարուցել՝ թոյլ տալու Թիֆլիսում բանալ կանանց ֆելդշերական դասընթացքներ, ուր պէտք է ընդունվեն ցանկացող կանայք՝ առանց ազգի և կրօնի խտրութեան։ Դասընթացքներում լսելու համար որոշված է—մանկաբարձուհիների համար 1 տարի, իսկ ոչ մանկաբարձուհիների համար 2 տարի։ Ամբողջ դասընթացքի համար իբրև վճար մուտքադրութիւն կայ սահմանել 30—50 ռուբ.։ Դասընթացքները կը բացվեն առաջիկայ սեպտեմբերի 1-ից։

◆ Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան նախաձեռնութեամբ և իշխանութեան թոյլտուութեամբ, Հաւլաբարում, Րօզովայա կոչված հրապարակի վրա գտնվող Հէյզուբեանի տանը բացվել է ձրի գրադարան-ընթերցարան։ Պաշտօնական բացումը տեղի ունեցաւ կիրակի, ամսիս 13-ին։

◆ Յուլիսի 16-ին մօտաւորապէս ժամը 6-ին Նիկիֆոր Պետրունիկը իր բնակարանում, Արկադեան նրբափողոցում № 62 տանը, ատրճանակի գնդակով վերջ է տուել իր կեանքին։ Գնդակը կպչելով ձախ քունքից ծակել-անցել է։ Սպանութեան պատճառը անյայտ է։ Դիակը տարված է Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Յուլիսի 12-ի գիշերը Թիֆլիսի գաւառի Սագարէջօյի դաշտից անյայտ մարդիկ քշել տարել են երկու եզ և մի ձի։ Գերված է տաւարած տղան։ Միջոցներ են ձեռք առնված տղային գտնելու։

◆ Վրիպակ.—«Մշակի» 147-րդ համարի «Նամակներ խմբագրութեան» բաժնում Ծալկայից զետեղված նամակում սպրդել են մի քանի սխալներ։ Այսպէս՝ Լուգանսկից ստացված է ոչ թէ 160 ր. 75 կ., այլ 154 ր. 75 կ.։ Նոյնպէս՝ Մարիուպոլից ստացված է 20 ր., Տագանրօգից 23 ր. 50 կ., Մելիտօպօլից՝ 13 ր., Րօստովից Դ./Վ. 141 ր.։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Յուլիսի 16 ի երեկոյեան, մօտաւորապէս ժամը 8 ին, Թիֆլիսի վաճառական Շավկէի կին Աննան, որ ապրում է Աւճալեան փողոցում № 63 տանը, յայտնել է ոստիկանութեանը, որ իր արկղից ու պահարանից գողացել են ոսկէ ու արծաթէ իրեր 435 րուբլու արժողութեամբ։ Գողութեան մէջ կասկածվում է Ալէքսանդրօպօլի քաղաքացի Մկրտիչ Մուրադեանը, որը կալանաւորվելուց յետոյ խոստովանել է իր գողութիւնը։ Գողացված իրերը գտնված են ու վերադարձված սեփականատիրոջը։

◆ Յուլիսի 16-ին, երեկոյեան ժամը 10-ին, Էրակլեան փողոցում № 10 տան մօտիկ դանակի հարուածով ձեռքից թեթև կերպով վիրաւորված է Սղնախի բնակիչ Գէորգ Մուրվալօվը, որը հրաժարվել է ցոյց տալ իրան վիրաւորողին։ Վիրաւորվելը կատարված է սիրային հողի վրա։ Վիրաւորվածը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոց։ Քննութիւն է կատարվում այդ մասին։

◆ Յուլիսի 15-ին ոստիկանութիւնը կալանաւորել է Գրիգոր Խաչիկեանին, որը մեղադրվում է յուլիսի 14-ին Հայկ Բաղդասարեանին վիրաւորելու համար։ Կալանաւորը ուղարկված է առաջին հաշտարար դատարանի առաջին բաժնի քննիչին։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Մի քանի օր առաջ «Баку» լրագրում տպագրված էր, որ այստեղ Նախիջևան-Մօլլէ Աբբասօվ անունով մի մարդ գողացել է իր կնոջ մօտից իր երեք երեխաներին և, հեռանալով այնտեղից, թողել է կնոջը առանց որևէ ապրուստի միջոցների ու անցագրի։ Այժմ այդ կնոջ հաւաքած մասնաւոր տեղեկութիւններից երևում է, որ փախչող ամուսինը երեխաների հետ միասին գտնվում է Անդրկասպեան երկրում՝ Նոր Բուխարայի մօտերը, որտեղ մուսուլմանութեամբ ոգևորութիւն է հաւաքում «թշուառ որբերի» համար։ Փախչող Աբբասօվը հետևեալ նշաններն ունի. բարձրահասակ է, փոքրիկ սև մօրուքով, դնում է սպիտակ ակնոցներ, երեխաներից տղան, որի անունն է «Մուսա», 7 տարեկան է, միւս տղան՝ «Եանչի» 6 տարեկան և երրորդը 12 տարեկան աղջիկ՝ «Նեխամէ Գեսիա» անունով։ Կինը յայտնելով այդ մասին, խնդրում է լրագիրներին արտատպել իր տուած այդ նշանները ի գիտութիւն հասարակութեան։

◆ Նաւթային և առևտրական «Նեֆթ» ընկերութեան բանուորները Բալախանիում, թւով 45 հոգի, յուլիսի 8-ին գործադուլ են յայտարարել՝ պահանջելով ֆիրմային աւելացնել ռոճիկները տարեկան վաստակի 30 տոկոսի չափով։

◆ Յուլիսի 13-ին, երեկոյեան ժամը 5-ին, Արմեանսկայա փողոցի վրա գտնվող «Ֆանտազիա» բաղնիսում ծառայողներ՝ Գրիգորեանցի, Շահմուրադեանցի, Քանանեանցի և Յակոբեանցի մի կողմից, իսկ միւս կողմից երեք անյայտ այցելուների միջև արիւնահեղ ընդհարում է տեղ ունեցել, որը չափազանց տխուր հետևանք է ունեցել առաջինների համար։ Նախ կռիւը սկսված է այցելուներից երկուսի ու ծառայողների միջև, որի միջոցին մօտենում է երրորդ այցելուն և սկսում է ծեծել ծառայողներին. կռիւը սուր կերպարանք է ստանում. ընդհանուր տուր ու դմբոցի ժամանակ այցելուները դանակներով վիրաւորում են Գրիգորեանցին ու Շահմուրադեանցին, իսկ Քանանեանցին վիրաւորում են փայտի հարուածով գլխից և ապա դուրս գալիս փախչում։ Անվնաս մնացած Յակոբեանը յայտնել է, որ նրանցից երկուսին նա ճանաչում է. նրանք երկու եղբայրներ Ամիր ու Թաբուժ Օհանեաններն են։ Վիրաւորներին փոխադրել են Միքայէլեան հիւանդանոցը, իսկ յանցաւորներին գտնելու համար միջոցներ են ձեռք առնված։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Մինիստրների խորհուրդը հաւանութիւն է տուել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան արած առաջարկութեանը՝ մասնաւոր դէպքում թոյլատրելու ռուսաց հոգևոր սեմինարիաների չորս հանրակրթական դասարանների դասընթացները աւարտողներին մտնելու մանկավարժական ինստիտուտը իբրև ուսանողներ։

◆ Յուլիսի 9-ին Միջին-Ասիայից Պետերբուրգ են հասել մի խումբ թիւրքմեններ, որոնց նպատակն է առևտրական կապեր հաստատել ռուս կօմմերսանտների հետ։

◆ Յունիսի 30-ին Իրկուտսկում Անդրբայկալեան երկաթուղային վարչութեան հաշւապահական գլխաւոր մասից անյայտացել է գանձապահ Գէորգի Դօլինան, որի ձեռքում գտնվում էր 100,000 ռուբլուց աւելի մի գումար։ («Спб. В.»)

◆ Բերդեանսկ գաւառի Պօպօվօ գիւղում մօտ օրերս մենամարտել են երկու պատանիներ՝ 14 տարեկան Նեմեննկօ և 16 տարեկան Վերեսկան գիմնազիայի 7-րդ դասարանի գեղեցկուհի աշակերտուհի Գաւրիլենկօյի պատճառով։ Մենամարտը տեղի է ունեցել ամայի դաշտում և հետևանքը եղել է սարսափելի. երկու մենամարտողներն էլ ընկել են գնդակից. նրանցից մէկը սաստիկ վիրաւորվելով մեռնում է 18 ժամից յետոյ, իսկ միւսը սպանված է տեղնուտեղը։ („Р. В.“)

◆ Մամուլի վերաբերեալ գործերի գլխաւոր կօմիտէտը ուշադրութիւն է դարձրել ծածուկ կերպով և ապօրինական կեղծ ֆիրմայի անունով հրատարակված մի բրօշիւրի վրա, որը կրում է հետևեալ վերնագիրը. «Զինւորական ծառայութեան, երդումի և դիսցիպլինայի մասին»։ Կեղծիքը կատարված էր շատ խորամանկ կերպով, և որպէսզի իշխանութեան կասկածը փարատած լինեն, բրօշիւրի շապկի վրա տպագրել էին, որ նա հաւանութիւն է ստացել գլխաւոր շտաբի կողմից և որ Սիբիրեան գնդի հրամանատարը յանձնարարում է տարածել նրան զինւորների մէջ։ („Н. В.“)

վասա էին մինչև 5 շիլինի իջնել, պայմանաւ որ կրճատում չըլլար ամուսնացեալներու։ Իսկ տարիքի սահմանը խախտել անկարելի էր։ Բանւորական անդամ մը, որ պարլամէնտի ամենէ ճարտասան հռետորը ճանչցուած է և որ, շնորհիւ իր «կծու յարձակումներուն», շատ չի սիրուիր, երբ 70 տարեկանին վրայ կը վիճէին, առանց այլևայլի, դառնալով մինիստրական նստարաններուն, գոչեց. «Գործաւոր մը եթէ մինչև 70 տարեկան հասնի, արդէն ժամանակ է դագաղը պատրաստելու...»։ և այս արտաբերութիւնը, որքան ալ ճշմարիտ, մեծ դժգոհութիւն առթեց ներկաներուն։

Պահպանողականներուն մէկ մասը, երբեմն անհրաժեշտութիւն մը իրենց դիրքէն, հակառակեցաւ զանազան հողերու վրայ, և փաստերէն ամենէն աւելի յեղյեղուածը այն էր, որ, եթէ սոյն օրինագիծը գործօն վիճակի մէջ դրուէր, անգլիացի գործաւորին մէջ խնայողական հոգին պիտի սպաննէր ու ան իր վաստակը պիտի յատկացնէր վայելքի չոր, որովհետև, մոռցայ յիշելու որ, կայ յօդուած մը այդ օրէնքին մէջ, որով շաբաթական 10 շիլին եկամուտ ունեցողները անմատչելի կը մնան թոշակէ... Իսկ ուրիշ մաս մըն ալ երես ունեցաւ յայտարարելու թէ այդ ծրագիրը անբաւական էր և լաւագոյնը շնորհելու համար հարկ էր՝ նախ ներմուծուած ապրանաց վրայ մաքս բարդելով տարեկան կոկիկ եկամուտ մը ստեղծել բայց, որպէս թէ ուրիշ աղբիւրներ չը կային նոր եկամուտներ ստեղծելու...

Այսուհանդերձ, այս բոլոր վէճերէն վերջ յիշեալ օրինագիծը պարլամէնտէն անցաւ և այժմ յանձնուած է լորդերու ժողովին՝ վաւերացման համար։ Իր ներկայ վիճակին մէջ այդ օրինագիծը հետևեալն է։ 70 տարեկան սահման, շաբաթական 5 շիլին, զոյգերը անփոփոխ կը ստանան իւրաքանչիւրը 5 շիլին, տէրութեան անմիջական կօնտրոլի ներքև և մինչև 10 շիլին շաբաթական եկամուտ ունեցողը մատչելի է թոշակի, եթէ վերոյիշեալ քննութիւններէն յաջող անցնի, որ է՝ 10 տարուայ անարատ կեանք մը....

Թէպէտ լորդերու ժողովն ամեն իրաւունք ունի հասարակաց ժողովի որոշումները մերժել կամ փոփոխել, սակայն դրամական ինչ հարց որ որոշուի, իրենք անկարող են միջամտել՝ քանի որ արքունի գանձապահը հասարակաց ժողովին կը պատկանի. հետևաբար սոյն կարգադրութիւնը կը մնայ որպէս վերջնական։

Այնպէս կենթադրուի թէ տարեկան 500,000 ծերեր պիտի կարողանան օգտուիլ այս օրէնքէն, բայց դժգոհութիւնը դեռ ես շատ մեծ է, քանի որ այդ 500,000-ին մեծամասնութիւնը կը կազմեն երկրագործական աշխատաւորներ, այսինքն բացօթեայ կեանքի զաւակները, որոնք առհասարակ երկար կապրին շնորհիւ իրենց շրջակայքին և յաճախ կարող են կոկիկ խնայողութիւններ ևս ընել ծախսի շատ միջոցներ չունենալով։ Իսկ մեծ քաղաքներու աշխատաւորները, որոնք կեանքերնին ֆաբրիկաներուն մէջ կը փտեցնեն, մեծամասնութիւնը արդէն հազիւ թէ 60 տարեկանի կը ստանան և գրեթէ առիթ չունին օրէնքէն օգտուելու, թէև ամենէ արժանաւորները։ Հիւսիսային Անգլիա, ուր կը գտնուին ջուխայի և կերպասեղէններու հսկայ ֆաբրիկաները և ուր երկու սեռն ալ 7—8 տարեկանէն կը սկսին գործել, ստէպ իրենց 30 տարեկանէն արդէն թոքային հիւանդութիւններով կը տառապին և բնաւ պատեհութիւնը չունին թոշակի համար սահմանուած առասպելական տարիքին հասնելու։ Ահա թէ ինչու հակառակեցան ժողովրդին իսկական բարեկամները ճանչցուած անհատներ սոյն օրէնքին դէմ և իրենց փաստերով սաստիկ ճակատ կէտ մը ազատական կառավարութեան մը ձեռքը ծիծաղելիութեան աստիճանին հասուցին։

Յամենայն դէպս, ազատական պատասխանատու առաջնորդներ, իրենց շարք մը մեծատուն անդամներուն թշնամանքը չը յարուցանելու սիրոյն, ուկիղէն տարի մը կորսնցուցին ժողովրդին վստահութիւնը շահելու կամ, անշուշտ, այնպիսիներ, որ բանը ոչինչէն լաւագոյն կը նախընտրեն, սակայն սա ամեն ժամանակ չըլլար։

Միևնոյն ժամանակ պէտք է յիշել թէ բոլոր անոնք, որ այս օրինագիծը անբաւական կը համարէին, անոր սկզբունքին հաւանելով, պարլամէնտի մէջ կառավարութեան կողմէն քուէ տուին և իրեն հեռնտու հանդիսացան իսկական թշնամիներուն դէմ կռուելու։

Մինաս-Ցոլակ

ՄԱՄՈՒԼ

Մենք շարունակ այն կարծիքն ենք յայտնել, որ տեղական ռուս թերթերը հայ և վրաց մամուլի մէջ այս և այն հարցի մասին մղվող բանակռւի առիթով պէտք է աշխատեն լինել անաչառ դատաւոր, անկողմնակալ, լուսաբանել փաստերը օբիէկտօրէն։

Դժբաղդաբար, տեղական ռուս թերթերը յաճախ մեղանչում են այդ պարտաւորութեան դէմ։ Եւ մանաւանդ ցաւալի է, որ «Закавказье» լրագրի պէս մի թերթ այդպէս է վարվում։ Վերջերս «Մշակի» և «Վտակի» ու «Զանգակի» միջև մղվող բանակռիւը Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնների և հոգաբարձութեան դէմ ժողովրդի մէջ տարածված տրտունջների ու մեղադրանքների առիթով այդ թերթը բոլորովին տենդենցիօզ կերպով է լուսաբանում, քաղելով իր տեղեկութիւնները միայն «Զանգակ» թերթից, անգիտութեան և անուշադրութեան տալով մեր լրագրի հաղորդած տեղեկութիւնները։ Անաչառ, բարեխիղճ քննադատը կամ յօդուածագիրը ամենից առաջ կը հաղորդէ երկու բանակռւող կողմերի առաջ բերած փաստերը, իրողութիւնները, մերկացումները և ապա իր եզրակացութիւնը կանէ, որպէսզի ընթերցողն էլ համոզվէ, թէ, իրօք, եզրակացութիւնը ճիշտ է և լօգիքական։ Բայց այդպէս չէ վարվում «Закавказье» թերթը։ Նա իր յօդուածը սկսում է նրանով, թէ վերջերս հայ լրագիրները սաստիկ զբաղված են Ներսիսեան սեմինարիայի գործերով և մի խումբ, որի գլուխ է կանգնած «Մշակ» լրագիրը, առաջ պնդում էր հոգաբարձուների նոր ընտրութեան վրա, իսկ վերջերս հաշիւ էր պահանջում հոգաբարձուներից, բարդելով նրանց վրա մի շարք մեղադրանքներ կամայականութեան և հասարակական գումարների վատնողութեան մէջ։ Իսկ միւս խումբը, «Զանգակ» թերթում հերքելով «Մշակ» լրագրի տեղեկութիւնների ամբողջ սուտութիւնը, գտնում է, որ հոգաբարձութիւնը միանգամայն արժանի է վստահութեան, և այլն։

Եւ լրագիրը մանրամասն առաջ է բերում «Զանգակում» հրատարակված մի հոգաբարձուի հաշիւը, հաշիւ, որ ոչ միայն ոչ ոքից չէ քննված, այլ նոյնիսկ յօդուածագիրը քաշվել է իր անունը ստորագրելուց նրա տակ։

«Закавказье» թերթը, եթէ կամենար անաչառութիւն պահպանել, պարտաւոր էր բերել և այն մեղադրանքները, որ հայ ժողովուրդը (որին նա անուանում է մի խումբ) բարդում է հոգաբարձութեան վրա։ Եթէ նա առաջ բերէր մեղադրանքները, այն ժամանակ կը պարզվէր, թէ որքան ճիշտ են անանուն հոգաբարձուի հերքումները։ Այդ հոգաբարձութեան մեղադրում են, որ նա ոտնակոխ է արել թէ սեմինարիայի կանոնադրութիւնը, թէ Փոխարքայի ժամանակաւոր կանոնները, նախահաշիւ չէ կազմել և ըստ այնմ գործել, հաշիւ չէ տուել ամբողջ երկու տարի, ծախսել է անձեռնմխելի գումարները, որ ամենևին իրաւունք չունէր, և այլն։ Եթէ «Закавказье» թերթը այս մեղադրանքները առաջ բերած լինէր, այն ժամանակ ընթերցողը շատ հեշտութեամբ կասէր անանուն հոգաբարձուին. «Բոլոր ձեր արածները ապօրէն են, քանի որ դուք ծախսել էք անձեռնմխելի գումարներից, որ իրաւունք չունէիք»։

Նոյն տենդենցիօզ վերաբերմունքը մի քանի օր առաջ «Закавказье» թերթը ցոյց տուեց և ընտրութիւնների վերաբերմամբ։ Նա գործը այնպիսի կերպարանքի տակ ներկայացրեց, որ իբր թէ առաջնորդն էր ապօրինի կերպով ընտրութիւններ նշանակել, իսկ տեղապահը փոխել էր այդ ապօրինի կարգադրութիւնը, այսինքն իրողութիւնը լուսաբանեց այնպէս, ինչպէս «Վտակը» և «Զանգակն» էին անում, միակողմանի, մինչ մեր լրագրում առաջ բերված փաստերը անհերքելի կերպով ապացուցանում են, որ ընտրութիւնները նշանակված էին տեղապահի կարգադրութեամբ և ոչ առաջնորդի։

Եւ մենք ստիպված ենք խորհուրդ տալ «Закавказье» թերթի հայ ընթերցողներին զգուշութեամբ և սկեպտիկօրէն վերաբերվել այդ լրագրի հաղորդածներին հայ կեանքից։

*

Տխրահռչակ Մենշիկօվը այժմ էլ իր սլաքները ուղղում է «երիտասարդ-թիւրքերի» դէմ, որոնց նա անուանում է «թիւրքական կադէտներ» և սուլթանին բարի խորհուրդներ է տալիս։ Կանգնեցնել սահմանադրական շարժումը, վշտացած ասում է «Новое Время»-ի արժանաւոր համհարզը, դժուար է. պէտք է ստեղծել պարլամենտ, բայց պէտք է խուսափել երիտասարդ-թիւրքերի ազդեցութիւնից, որոնք «արդէն յայտարարել են ազգերի հաւասար իրաւունք»։ Եթէ, ըստ Մենշիկօվի, «թիւրքական կադէտներին» չը զսպեն, այն ժամանակ, հէնց որ կը գումարվի թիւրքական պարլամենտը, կը սկսվի կուսակցութիւնների և ազգութիւնների կատաղի կռիւ, և նրանցից շատերի համար Թիւրքիայի կործանումը նոյնիսկ ցանկալի է. բացի թիւրքերից, պարլամենտի մէջ կը մտնեն, հաւանօրէն, և հայերը, բուլղարները, յոյները, արաբները, կուցօ-վալախները, ալբանացիները, սերբերը, հրէաները, գնչուները և այլք։

Դա, Մենշիկօվի կարծիքով, մեծ աղէտ է, ուստի և Ռուսաստանը պէտք է փադիշահին բարեկամօրէն նախազգուշացնէ, անհա ինչպէս.

Եթէ Թիւրքիայում պէտք է պարլամենտ, թող նա լինի ազգայնական-թիւրքական, առանց որևէ հայկական «կօլօնների» և յունական խմբերի, և թող նա ընտրվի երկրի իրական լաւագոյն, գործունեայ մարդկանցից։

Ոչ խուժանը, ոչ յեղափոխականները, ոչ մանր ինտելիգենցիան, ոչ օտարազգիները չը պէտք է ներկայացուցչութեան իրաւունք ունենան։ Այդ նիւթը, ըստ իր բնութեան, կառավարվող է և ոչ կառավարող։

Գեղեցիկ պարլամենտ կը լինի, երևակայում ենք։ Եւ նա կը լինի Մենշիկօվի իդէալը նաև ռուսական պարլամենտի համար։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 10 յուլիսի

Այսօր հողին յանձնվեց Իվան-բէկ Մելիք-Թանգեանի դիակը։

Երկսեռ խուռն բազմութեան ներկայութիւնն և ամենքի աչքերի յորդաբուղխ արտասուքն ու կականը վկայում են, որ հանգուցեալը ամենքից սիրված ու յարգված անձն էր։ Իվան-բէկը Զանգեզուր գաւառի Բռնակոթ գիւղի Մելիք-Թանգեաններից է, որ մանկական հասակից հեռանալով հայրենի գիւղից՝ մի քանի տարի եղել է պետական ծառայութեան մէջ ակցիզնու պաշտօնով, իսկ վերջին 10 տարուց ի վեր ծառայում էր Բալախանիում, Փիթօյեվի նաւթահանքում՝ իբրև գրասենեակի գլխաւոր հաշւապահ։ Նրա բոլոր ընկերներն, ուր որ էլ լինեն, միայն ցաւ ու կսկիծ պէտք է զգան, երբ լսեն ազնիւ ընկերոջ տարաժամ մահվան բօթը։

Բագուի թերթերն արդէն յայտնել են, որ նա սպանվել է Բալախանիում, իր բնակարանում, ամսիս 4-ին, համագիւղացիների ձեռքով։

Լրագրական տեղեկութիւնների համաձայն հանգուցեալը սպանված է իբրև կալուածատէր, որ իբրև թէ բռնի կերպով իւրացրել է ժողովրդական հողերը։ Սակայն այդ հիմնովին սխալ է, որովհետև նրան մօտիկ ծանօթ մարդիկ միաբերան կը վկայեն, որ նա ոչ թէ բռնակալ չէր, այլ ընդհակառակն ծայրայեղ ժողովրդական էր։

Հեզահամբոյր բնաւորութեան շնորհիւ՝ նրա մօտ ազատ ել ու մուտ են ունեցել իր համագիւղացին և օտարը, հայն ու թուրքը և ամեն դասակարգի ու պաշտօնի մարդիկ։ Բայց այսօր մի քանի սրիկաների ձեռքով ընկնում է այդ անմեղ անձը, թողնելով չորս որբեր իրանց սգաւոր մօր և հօրեղբայրների խնամքին։

Թէ հայ գիւղացին հողազուրկ է և պէտք է վաղօրօք հոգալ, կապել նրան հողի հետ, դա փաստ է և շտապել պէտք է, մինչդեռ իբրև քաղցած գազաններ չեն յօշոտում միմեանց։ Բայց Բռնակոթցի մարդասպաններին միայն հողային հարցը չէ, որ ստիպել է ձեռքերնին անմեղ արեան մէջ շաղախելու. ոչ, այդտեղ հողային վէճի հարց չը կայ. այդտեղ կայ հայկական սև նախանձի կրքոտ արտայայտութիւն, որի առաջին զոհն եղաւ հանգուցեալ Իվան-բէգը։ Մենք լսել ու տեսել ենք, որ թուրքերի մէջ ներքին կռիւների շնորհիւ ամբողջ ընտանիքներ, ցեղեր են կոտորվել ոչնչացել (Բալախանի, Մաշտաղա և այլն)։

Բայց այսօր՝ հայ-թուրքական անմիտ կոտորածից յետոյ, հակառակն ենք տեսնում։ Մեր սուր-սուր դաշոյններն ու արագաձիգ մաուզերներն, որ այնքան շտապով ձեռք էինք բերել ինքնապաշտպանութեան համար մեր եղբայրների դէմ ենք ուղղում—սպանում։

Բաւական է, վերջ տանք մեր անմիտ եղբայրասպան կոտորածին, ուշքի գանք և տեսնենք թէ ուր է տանում այն շաւիղը, որի վրա կատաղաբար արշաւում ենք մենք։

Իսկ այդ բանի մէջ հէնց առաջինն ինքը գիւղական մասսան պիտի լինի, որ երևան հանելով չարագործներին, կը մաքրէ իր վրայից մարդասպանութեան սև բիծը։ Քաղցր է մեզ յուսալ, որ՝ հակառակ պատմող լուրերի՝ այդ սպանութեան մէջ մեղաւոր չէ ամբողջ Բռնակոթն և մանաւանդ նրա գիտակից մասը, այլ դա մի փոքրիկ խմբակի գործ է. և եթէ այդպէս է, թող շտապեն մամուլի միջոցով բարձրացնել իրանց հուժկու բողոքը կատարված ոճրի դէմ։ Լռութիւնն այսպիսի պարագաներում դատապարտելի է, որովհետև կորստաբեր է խաղաղ բնակչութեան համար և ընդհակառակն խրախոյս՝ ոճրագործների համար։

Վերջացնելով խօսքս, Թանգագին ընկեր, հանգիստ եմ մաղթում ոսկերացդ հողի մէջ. գնա, ել այս փուչ աշխարհից, ուր եղբայրը եղբօր դէմ դարան մտած՝ իբրև գայլեր յօշոտում են միմեանց։ Քո քաղցր յիշատակը յաւիտեան անմոռաց պիտի մնայ հարազատներիդ և ընկերներիդ սրտերում, իսկ նուիրական շիրմիդ մշտական բողոք՝ ճշմարտութիւնն ոտնահարող աւազակների դէմ։

Նախկին ընկեր

—

Պեատիգօրսկ, 14 յուլիսի

Շուշու գաւառի Գիշի գիւղում վախճանվել է իմ մայր Նանագիւլ Աթաբէկեանցը։ Նրա յիշատակը անմահ պահելու համար նուիրում եմ մեր գիւղի եկեղեցու յատակը շինել փայտից, գերեզմանատունը շրջապատ քաշել քարից։ Նուիրում եմ մեր գիւղական շտեմարանին 50 ր., ուսումնարանի գրադարանին 150 ր., որից 50 ր. փոխադրում եմ ուսումնարանի հոգաբարձութեան շինել տալ մի պահարան գրքերի համար, իսկ 100 ր. փոխադրում եմ խմբագրութեանդ՝ առնել մանկական գրքեր և ուղարկել ուսումնարանին։ Նոյնպէս ուղարկում եմ այժմ 6 ր. խմբագրութեանդ՝ մի օրինակ «Մշակ» ուղարկել մեր գիւղի ուսումնարանի անունով և խոստանում եմ 5 տարի շարունակ բաժանորդ գրվել «Մշակ» լրագրին և համարները ուղարկել մեր գիւղի ուսումնարանին։ Որովհետև ես այժմ ընտանիքով ամարանոց եմ եկած Պեատիգօրսկ, ամսիս 19-ին, շաբաթ օրը պատարագից յետոյ կատարվելու է հոգեհանգիստ՝ ի յիշատակ մօրս. ճաշի փոխարէն նուիրում եմ տեղիս հայոց կանանց բարեգործական ընկերութեան 25 ր., ուսումնարանին՝ 25 ր.։

Խնդրում եմ միւս լրագրներին արտատպել վերոգրեալը։

Փեփրոնէ և Մարտիրոս Աթաբէկեանցներ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍԻ ԴԵՍՊԱՆ ԶԻՆՕՎԻԵՎԻ ՀԵՏ

—

Թիւրքիայում և Մերձաւոր Արևելքում տեղի ունեցող դէպքերը բացատրելու համար «Слово» լրագիրը դիմեց Պետերբուրգում գտնվող Կ. Պօլսի ռուսաց դեսպան Զինօվիևին։

— Ցուցմունքներ յաճախակի են երևան եկել զօրքերի մէջ երիտասարդ-թիւրքերի շարժման հետ միասին,—ասաց դեսպանը։— Դրանց դէմ սուլթանը կիսատ-պռատ միջոցներ էր գործ դնում, որոնք, սակայն, ոչ թէ վերացնում էին զօրքերի մէջ դժգոհութիւն առաջացնող պատճառները, այլ այն հետևանքն էին ունենում, որ ժամանակաւորապէս հանգստութիւն էր սկսվում։ Սակայն, այս անգամ շարժումը զօրքերի մէջ լուրջ, մինչև անգամ սպառնալի կերպարանք ընդունեց։ Ցուցմունքը գրաւել է ոչ միայն հայկական, այլ և ալբանական մասը, որը սուլթանի գվարդիան է կազմում։ Ցուցմունքների մասսայական բնաւորութիւնը զօրքերում, երիտասարդ թիւրքերի շարժման սաստկութիւնը ստիպում են սուլթանին լուրջ բարենորոգումների շաւղի վրա կանգնել։ Նախկին անգործունեայ և ինէրտ զինուորական մինիստրի հեռացումը պաշտօնից և այդ պաշտօնում Օմէր-Ռուշդի-փաշայի նշանակելը, իմ կարծիքով, սուլթանի առաջին քայլն էր այդ ուղղութեամբ։ Սաիդ-փաշային և մեծ-վէզիր նշանակելը նշան է, որ սուլթանը ուզում է նոր ուղղութեամբ գործել։ Նրա նախորդը անմիջապէս ենթարկված էր գերմանական ազդեցութեանը, և նրա հեռացնելը սուլթանի առաջին զիջումն էր երիտասարդ-թիւրքերին։

— Արդեօք հնարաւոր էք համարում երիտասարդ-թիւրքերի պահանջների իրագործումը և ներկայացուցչական վարչութիւն մտցնելը Թիւրքիայում։

— Սուլթան Աբդիւլ-Համիդը, որքան ես նրան ճանաչում եմ,—հակառակ է ամեն տեսակ չափազանցութիւնների։ Նա որպէս չի վստահանայ մտցնել սահմանադրութիւն, նոյնպէս և խիստ միջոցներով չի ճնշի շարժումը, այլ կը կանգնի մասնակի բարենորոգումների շաւղի վրա։ Ես ասում եմ մասնակի այն պատճառով, որ Թիւրքիայի ներկայ ֆինանսական դրութեան ժամանակ այդ ռեֆօրմները արմատական չեն կարող լինել։ Գանձարանը սաստիկ աղքատ է և մնում է միմիայն փոխառութիւններով, գլխաւորապէս գերմանական փոխառութիւններով։ Այդպիսով կարելի է, օրինակ, ժամանակաւորապէս խաղաղեցնել զօրքը, և այդ բանը կարող է անել Օմէր-փաշան, որը եռանդ և ժողովրդականութիւն ունի զօրքում, բայց արմատական փոփոխութիւն մտցնելու համար զօրքի մէջ անհրաժեշտ է նիւթապէս ապահովել օֆիցէրական կազմը և զինուորների ապրուստը, մի բան, որ հազիւ թէ կարողանայ կատարել թիւրքաց գանձարանը։

— Արդեօք արձագանք կունենան թիւրքական դէպքերը մակեդօնական հարցի լուծման վրա։

— Բալկանների վրա ամենաանշան կայծն անգամ կարող է հրդեհ առաջացնել, իսկ թիւրքական դէպքերը, իրանց սպառնալի բնաւորութեամբ, էապէս փոխում են պրօբլէմների լուծման պլանը Մերձաւոր Արևելքում։

— Առհասարակ,—աւարտեց իր խօսակցութիւնը Զինօվիևը,—դէպքերը մեր օրերում գլուխը պտտեցնող արագութեամբ են կատարվում։ Շարժման սաղմերը ես նկատում էի դեռ այն ժամանակ, երբ ես Բօսֆօրի ափերումն էի, բայց չը նախատեսեցի, որ նա մի այդպիսի տարերական ոյժով կաճի այդպիսի կարճ ժամանակում, և փոխանակ Եմսի, ուր ես պատրաստվում էի գնալ առողջութիւնս վերականգնելու համար, ես այս օրերս վերադառնում եմ իմ պաշտօնին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԳԵՐՄԱՆԻԱ

Մինիստրների տեսակցութիւնը.—Բեռլինի հեղինակաւոր շրջաններում լուր է պտտում, որ առաջիկայում Ա. Պ. Իզվօլսկին տեսակցութիւն պիտի ունենայ իշխան Բիւլօվի հետ։

Պատմաբան Լամպրեխտի ճառը.—Գերմանական մամուլը մեծ ուշադրութիւն է նուիրել այն ճառին, որ մօտ ժամանակներս արտասանեց յայտնի պատմաբան Լամպրեխտը Լայպցիգում Գերմանիայի արտաքին քաղաքականութեան մասին։

Այդ ճառի մէջ Լամպրեխտն ասել է. «Մենք այժմ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի նման դարձել ենք տիեզերական մի պետութիւն իր բոլոր շահերով ու պարտականութիւններով։

«Սակայն վերոյիշեալ պետութիւնները, երևի, այժմ ձգտում են մեզ հրել դէպի յետին կարգը և աշխատում են խոչընդոտ հանդիսանալ մեզ ու Աւստրօ-Ունգարիային,—եթէ միայն այդ կայսրութիւնը կը մնայ մեր հետ դաշնակից,—մուտք գործել Մերձաւոր Արևելք և Հիւսիսային Աֆրիկա, որպէսզի հնարաւորութիւն ստանան իրանք շահագործելու աշխարհի այդ մասերը, որոնց հարուստ ապագայ է խոստանում։ Այդ նպատակով նրանք համաձայնութիւն են կայացրել իրար հետ Անգլիայի ղեկավարութեամբ։ Կաջողվի՞ արդեօք այդ համախմբումին խլել մեզանից մեր ոյժերն ու կապիտալները գործադրելու այդ բնական ճանապարհները։ Հիւսիսային Աֆրիկան արդէն փաստօրէն բաժան-բաժան է արված Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև։ Այժմ ամբողջ Թիւրքիան, Պարսկաստանը և Աւղանստանը նոյնպիսի եղանակով պէտք է բաժանվեն Անգլիայի և Ռուսաստանի միջև։ Այդ պատճառով Գերմանիայի բաղդը կախված է մակեդօնական և մարօկկեան հարցերի լուծումից, որոնք մեզ այնչափ հեռաւոր են թւում։ Հասել է ժամանակը պարզապէս արտայայտելու, որ մօտիկ տարիներս մեզ համար չափազանց կրիտիկական են և որ նրանք կը վճռեն մեր ժողովրդի և մեր տիեզերական դրութեան վիճակը։ Բայց ամենքը պէտք է իմանան, որ մենք հաստատապէս մտադիր ենք չը հրաժարվել այն բանից, որի իրաւունքն ունենք»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

15 յուլիսի

ՄԻՏԱՎԱ։ Տելշից վերադարձողները հաղորդում են, որ քաղաքը աւերակների կոյտեր է դարձել։ Ութ հազարանոց ազգաբնակութիւնը մեծ կարօտութիւն ունի թխած հացի. մի քանի բարեգործներ ուղարկում են Լիբավայից ու Շաւելից։ Մատակարարումը մեծ դժուարութիւններ է ներկայացնում, որովհետև Տելշին երկաթուղային գծից 50 վերստ հեռու է գտնվում։ Այրվել է ամբողջ առևտրական մասը։ Վնասվածները երկու միլիոնից անցնում են։ Կազմվել է նպաստամատոյց կօմիտէտ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Սենատի դատաստանական դեպարտամենտում (քննվում էր) գեներալ-նահանգապետի առաջարկը, որ սենատը միջոցներ ձեռք առնի Կուօկկալայի 11 ամբաստանեալներին, որոնց Վիբօրգի դատարանը Կուօկկալայում ռումբեր պատրաստելու համար ժամանակիր աշխատանքի է դատապարտել, ռուսական իշխանութեանը յանձնելու մասին։ Դեպարտամենտը, գտնելով որ այդ անձանց դատապարտված պատիժը կրելը արգելք չէ լինում նրանց ռուսաց իշխանութեան ձեռքը յանձնելու, համապատասխան որոշում կայացրեց։

ՀԱԱԳԱ։ Դեսպան Դեբեսը յետ է կանչված Վենեցուէլայից նախագահ Կաստրօյի հետ ունեցած միջադէպի մասին տեղեկութիւններ տալու նպատակով։

«Հերդերլանդ» կրէյսերին հրահանգներ են տրված ռմբակոծութեան դէպքում, թէև դեռևս հարց չէ յարուցված Նիդերլանդիայի և Վենեցուէլայի միջև յարաբերութիւնները խզելու մասին։ Նոյնպէս յայտնի չէ ոչինչ առ այժմ ծովային ցոյցի մասին։

16 յուլիսի

ՕԴԵՍՍԱ։ Յուլիսի 15-ին եկած հեղեղը ահագին թշուառութիւններ պատճառեց։ Մանաւանդ վնասվեցին Պերէսիպ և Մօլդավանկա քաղաքամասերը, ուր բնակվում են աղքատ բանւոր մարդիկ և որոնք կորցրին իրանց ամբողջ ունեցածը։ Շատ ընտանիքներ մնացել են առանց բնակարանի և կերակրի։ Քաղաքի զանազան մասերում հեղեղը քանդել է շատ տների հիմքերը։ Տները ճեղքվել են և սպառնում են փլչել։ Մի քանի տներ քանդվել են։ Վնասվել են քաղաքային շատ շինութիւններ։ Մարդկային զոհեր չը կան։ Ի նկատի ունենալով թշուառութեան ահագին չափերը, գեներալ-նահանգապետը դիմեց ազգաբնակութեան կոչ՝ անելով օգնութեան հասնել վնասվածներին նուիրատուութիւններ ընդունելով։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Ժէլեզնօվօդսկի մօտերքը հինգ պէտարդաներ էին գցել մարդատար գնացքի տակ։ Պայթիւնը սարսափ տարածեց ճանապարհորդների մէջ։ Վնասվածներ չը կան։

ԽԱԲԱՐՕՎՍԿ։ Վլադիվօստօկեան արական գիմնազիայի դիրեկտոր Դեաչկօվ, որը աշակերտների հետ էկսկուրսիայի համար ճանապարհ էր ընկել, խեղդվեց Սուչան գետի մէջ, փրկելով խեղդվող գիմնազիստին։ Հանգուցեալ Դեաչկօվը մեծ ժողովրդականութիւն էր վայելում։ Կազմակերպվում է հանգանակութիւն նրա անուան մի թոշակ հիմնելու համար։

Կ. ՊՕԼԻՍ։ Ադալիայում ժանտախտի երկու դէպք է եղել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ռէվէլից վերադարձան ծովային, արտաքին գործերի, պալատի մինիստրութեան դիւանատան հրամանատար գեներալ-մայոր Մոսօլով, Պարիզի ռուսաց դեսպան Նելիդօվ և ֆրանսիական դեսպան Տուշար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձ[illegible]
Գ. Ց. ԳՈՒՐԳԻ[illegible] 12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԻԱՆ.—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ այս յուլիսի 21-ին, ցերեկվայ ժամը 12-ին, կը լինի

ԱՃՈՒՐԴ

Հալաբարի եւ Կուկիայի քաղաքային դաշտերի արօտատեղիները կապալով տալու։

Կապալով տալու պայմանները և ուրիշ տեղեկութիւններ կարելի է ստանալ քաղաքային դումայում։

3—2
(չ. ու. կ.)

ՆԿԱՐԻՉ Բ. ՃԷՊԷՅԵԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ և ՈՍԿԵՋՕԾԵԼՈՒ
արհեստանոցը առայժմս Թիֆլիսից տեղափոխված է Ստաւրօպօլ,
որտեղ առաջվայ պէս ընդունվում են
●●● ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ ●●●
ՁՈՒՆԵՒՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՏՐՎՈՒՄ Է ԱՊԱՌԻԿ
Պատուէրները կատարվում են
Ընտիր Հայկական Ճաշակով
Ցուցակը և պայմանները ուղարկվում են ձրի։
Դիմել՝ Ставрополь н|К., Барятинская № 31. Б. Джебеянцъ.
5—4
(չ. ու. կ.)

ՅՈՒԼԻՍԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ
Առաջին տարի
Գինը 30 կ.
Երկրորդ տարի
Գինը 45 կ.
Գլխաւոր պահեստը՝ Թիֆլ. „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ" գրավաճառանոցում
Բագու՝ „Сотрудникъ"
Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ"
(օ. մ.)
10—10

Типографія „Экономія" Ав. Мугдусіаконова съ С-ми.
Большая Ванкская ул. № 3.